


355.4

Ա-40

ԱՄՈՍՈՎ

ՏԱՆԿԵՐԻ ՄԱՐՏՈՒՄ



ՊԵՏՐՈՍ ԴԱՐՄՆՐԱՏ ԲԱԺԻՆ 1932 թ. ՅԵՐԵՎԱՆ

8.02.2013

1 MAR 2010

Ս. ԱՄՈՍՈՎ

355.4

Ա-49


W

ՏԱՆԿԵՐԸ ՄԱՐՏՈՒՄ

ՔԱՐԳՄ. Տ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

1008
35636

ՊԵՏԼՐԱՏ
ՈՍԶՐԵՐԱՏՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ
1932



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՆԿԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Տանկերը հանդես են յեկել առաջին անգամ իմպերիալիստական պատերազմի ժամանակ: Առաջին տանկերը յեղել են վիթխարի, հանդարտաքայլ և զործուդուխան համար անհուսալի: Սակայն նրանք յեղել են մարտական հզոր մեքենաներ, զուգակցելով իրենց մեջ զրահ, կրակային միջոցները (թնդանոթները և զնդացիրները) և, շարժունակությունը մարտադաշտում (թրթռած և շարժիչ): Տանկերի այդ հիմնական հատկութիւնները թույլ են տվել նրանց այնպիսի ոգնություն ցույց տալ հետևակի զրոհի ժամանակ, ինչպիսին չեյին կարող ցույց տալ նրան զորքերի այլ տեսակները:

Տանկերը նշանակում են յին զնդացիրների փոխհացման համար, չնայելով ինչպիսի չեք լարող անել հրետանին, փորձահետե զնդացիրները լավ թագն փում են յին և հանդես են յին գալիս այն ժամանակ, յերբ հետևակն անցնում էր զրոհի: Տանկերը մասամբ պիտի փոխարինեն յին հրետանուն և զնայել հետևակի առջևից պիտի մաքրեն յին նրա ճանապարհը:

Սկզբում ստանկերը զործում են յին միայն հարձակվող հետևակի հետ միասին, այսինքն են՝ տանկերը և՛ հետևակը կոչում են յին անմիջականորեն կողք-կողքի: Իրա շնորհիվ առաջին տանկերից մեծ արագընթացություն չեք պահանջվում, պահանջվում էր միայն զրահ և հզոր կրակ:

Չնայած նրան, վրա առաջին տանկերի փորակը մեր տեսակետից ցածր է յեղել, այնուամենայնիվ այդ տանկերը մեծ դեր են խաղացել Անտանտայի հսկայական Գերմանիայի նկատմամբ: Համալսարհային պատերազմից հետո հանդամանորեն ուսումնասիրվեց տանկերի զործադրման փորձը: Հետագա տեղադրման վրա ժամանակաշրջանում մինչև մեր օրերը գլխավորները համառորեն աշխատում են կատարելագործել տանկերը և վերացնել կամ ն խաղացնել նրա թերութիւնները:


Նոր տանկերը շատ լաւում են տարբերվում իմպերիալիստական պատերազմի ժամանակվա տանկերից՝ նրանք արագընթաց են, զուրադարձ և ընդունակ են աշխարհի յերկրի մնացու մարտում և շարժման մեջ: Նրանք

տիրապետում են ավելի կատարելագործված սպառազինման և ավելի հեշտ են հաղթահարում խոչընդոտները: Սակայն դեռ չատ են մնացել հին տանկերից, մանավանդ Ֆրանսիայում, թեպետ նրանք բավականաչափ բարեփոխված են:

Ապագա պատերազմում մենք կարող ենք հանդիպել թե՛ նոր և թե՛ հին տանկերի, վորոնցով Ֆրանսիական բուրժուազիան տենդորեն մատակարարում է իր բարեկամներին, գրանց թվում և Լեհաստանին:

Տանկաչինություն հաջողություններն ընդլայնեցին նրանց ռազմական գործադրման բնագավառը: Իմպերիալիստական պատերազմի ժամանակ արդեն տանկերին առաջադրված էին հետևյալ պահանջները՝ վոչ միայն ուղեկցել հետևակին, այլ և լուծել մի շարք նոր ռազմական մարտական խնդիրներ: Մեր դաշտային կանոնադրքն ասում է (յերես 206)՝ հարձակման ժամանակ տանկերը կարող են գործադրվել՝

- ա) հետևակ զորամասերի հետ միատեղ գրոհ առյու համար,
- բ) պաշտպանողական շերտի խորքում ինքնուրույն խնդիրներ լուծելու համար հետևակի և հրետանու գործողությունների կապակցությամբ,
- գ) հեծելազորի հետ միատեղ հակառակորդի թևերում, գործողությունների համար,
- դ) թևերում և ճեղքվածքներում՝ մոտորացված զորամասերի կապում:



Նկ. 1. 45°-ից ավելի ուղղորդություն ունեցող լանջերը վոչ մի տանկ չի վերցնում

Տանկերի գործողությունների հաջողությունները մեծ չափով կախված է տեղանքից: Չի կարելի ստիպել տանկերին գնալ այնտեղ, ուր նրանք չեն կարող հաղթահարել տեղանքը: Անտաստ չըջաններն, որին նաև, չատ են դժվարացնում տանկերի գործողությունները, վորովհետև

տանկերը չեն կարողանում անցնել մեծ և խիտ անտառով: Կիրճերը և առհասարակ 45° ուղղորդություն ունեցող լանջերը հաղթահարել տանկերը չեն կարողանում (նկար 1). տանկերի համար անանցանելի յեն նաև ուղղորդ ավի, 1 մետրից ավելի խորություն և խրուտ հատակ ունեցող գետերը (թեթև տանկերի համար հունի խորությունը պետք է լինի վոչ ավելի քան 50—60 սանտիմետր): Այսպիսով տանկերը կարողանում են դործել վոչ ամեն տեղ, կնշանակի և զորամասերը վոչ մշտապես կարող են հույս դնել տանկերի աջակցության վրա:

Տանկերը—վճռական հարվածի միջոցներ են: Նրանք գործադրվում են այնտեղ, ուր պահանջվում է հակառակորդին ուժեղ հարված հասցնել: Դրա համար զորամասերից վոմանք իրենց ճակատում ունենալու յեն տանկեր, ուրիշներն այդպիսիք ամենևին չեն ունենալու և պիտի կովեն ինքնուրույն, մանավանդ այնտեղ, վորտեղ տանկերի գործողությունների համար տեղանքն անհարմար է:

Ինչո՞ւ չի կարելի բոլոր տանկերը բաժանել զորամասերի մեջ հավասարապես: Նրա համար, վոր այդ գեպքում յուրաքանչյուր զորամասին քիչ չափով տանկեր բաժին կընկներ. տանկերը ցրված կլինեյին ամբողջ ճակատով մեկ և հակառակորդը հերթով հեշտությամբ հաչիվ կտեսներ նրանց հետ:

Ուրիշ բան է, յեթե անհրաժեշտ քանակությամբ տանկեր տանք, նրանց գործողությունների համար ճակատի հարմար, բնտ հնարավորություն, ավելի լայն տեղամասին: Այն ժամանակ տանկերի մասսան իրենցից վիթխարի ուժ կներկայացնեն, վորոնք կջախջախեն թշնամուն և կթեթևացնեն ուրիշ տեղամասերում գործող, տանկեր չունեցող զորամասերի մարտական աշխատանքը: Բաժանել տանկերը, բոլորին հավասարապես, դա նշանակում է հակառակորդին խիել չուած մատնելով, վիտխանակ հարվածելու դորեղ բուռնցքով: Ահա թե ինչու տանկային զորամասերը չեն մտնում կորպուսներ, դիվիզիաների և գնդերի կազմի մեջ, այլ գտնվում են գլխավոր հրամատարություն տրամադրություն տակ, վորը յիանգամից ուղղում է նրանց այնտեղ, վորտեղ պետք է թշնամուն ջախջախիչ հարված հասցնել և վորտեղ վայրը տանկերի գործադրման համար բարենպաստ է: Տանկերը կարող են կցվել գնդերին, գումարտակներին և վաչտերին այնտեղ, վորտեղ դա պետք է: Հետևակ ստորաբաժանմանը (գումարտակին, վաչտին) մի դասակից պակաս տանկեր չեն կցվում:

Մեր Կարմիր բանակն ավելի և ավելի յե հագեցվում տեխնիկայով, մասնավորապես տանկերով: Դրա համար յուրաքանչյուր մարտիկ պիտի իմանա ի՞նչ են ներկայացնում իրենցից զանազան տիպարի տանկերը, ինչպիսիք են նրանց հատկությունները, յերբ և ինչպես են գործադրվում

նրանք, ինչպես գործել նրանց հետ, ինչով են ոգնում նրանք հետևելին, հեծերադորին ու հրետանուն և ինչ ոգություն են սպասում նրանք պոր-բերի այդ տեսակներից:


ՏԱՆԿԵՏԻ ՏԻՊԱՐՆԵՐԸ

Տանկերը բաժանվում են հետևյալ տիպարների՝

- 1) թեթև տանկեր (մինչև 7 տոնն քաշով)
- 2) միջակ տանկեր (12 մինչև 23 տոնն)
- 3) ծանր տանկեր (30 մինչև 70 տոնն)
- 4) տանկետկաներ (մինչև 2,5 տոնն)

1. ԹԵԹԵՎ ՏԱՆԿԵՐ

Թեթև տանկեր—ՌԵՆՈ (Փրանսիական և ուսումնական): Նրա քաշը 7 տոնն է. զրահավորումը խուլ է, վորը պաշտպանում է զնդակներից, արկի բեկորներից (մասամբ և արկերից). մաքսիմալ արագությունը հաս-վառար է 8, իսկ միջինը՝ 3—5 կիլոմետրի. ընթացքի պաշարը հավառար է 7—8 ժամի. զետով անցնում է այն անդերով, վորտեղով անցնում է հե-տևակը. հաղթահարում է մինչև 45° ուղղություն ունեցող լանջերը (գործնականորեն 35—40°). անցնու մե 50—70 սանտ. խորություն ունե-ցող հուններով, հաղթահարում է մինչև 1,8 մետր լայնություն և ուղղա-ծիղ կողեր ունեցող փոսերը, կոտորում է 25 սանտ հաս ուղիքներ առան-ձողեր ունեցող փոսերը, կոտորում է 25 սանտիմետր հաստությամբ առան-ձին ծառերը, ավերում է 2 աղյուսի հաստություն ունեցող սղջուսի պա-տերը. անցնում է 50 սանտիմետր բարձրություն ունեցող պատի վրայով. ավերում է լարափակոցները (անցքեր և բացում հետևակի համար), զնդագրային ընկեր և խրամատների չքարանները:



Նկ. 2 թեթև Ռենո տանկի կառվածքը

Տանկի սպառազինումը. Փրանսիական Ռենո տանկն ունի գնդա-ցի կամ 37 միլիմետրանոց Գոչկիսի թնդանոթ, վորոնք տեղափոխված են շուրջանակի պտտվող (360°) աշտարակում: Հրանյութի պաշարն է

զնդագրային փամփուշտ 4800 հատ, կամ թնդանոթային փամփուշտներ (նոսակ) 240 հատ: Ռուսական Ռենո տանկն իր աշտարակում ունի գնդա-ցի և թնդանոթ, վոր տեղափոխված են իրար նկատմամբ վորոշ անկյան տակ: Միաժամանակ կարելի չէ կրակել կամ թնդանոթով կամ զնդագրով, վորովհետև աշտարակը միայն մի մարդու համար է նախատեսված: Հրանյութի պաշարն է՝ զնդագրային փամփուշտներ մոտ 2000—2500 և թնդանոթային փամփուշտներ (նոսակ) 260 հատ: Շարժման ընթացքում տանկի գործոն կրակի հեռավորությունն է՝ 200—300 մետր: Տանկից 3—5 մետր գտնվող տարածությունը նա զնդակածել չի կարող: Դա կոչ-վում է մեռյալ տարածություն:

Մենք ունենք փոքր քանակությամբ Ռենո տանկեր, բայց նրանք արագորեն փոխարինվում են մեր նոր, ավելի արագընթաց տանկերով:

Պատերազմից հետո Ռենո տանկերից Փրանսիայում չատ են մնացել, ուստի և ապագա պատերազմում այդ հնացած տանկերի գործադրու-թյունը միանգամայն հնարավոր է, մինչև իսկ չնայած նրան, վոր կան նրանց լարեփոխված նմուշները, որինակ՝ լեհերի մոտ Ռենո նոր տանկե-րը չարժվում են մեկ ժամում մինչև 18 կիլոմետր արագությամբ:


Ռենո տիպարի տանկերը նշանակվում են գլխավորապես հետևակի հետ միատեղ գործելու համար, ոգնելու նրան, վորնչանցները նրան վնա-սող զնդագրները և ավերելու պաշտային արհեստական խոչընդոտները:

2. ԾԱՆՐ ՏԱՆԿԵՐ

Ծանր տանկերի հին ներկայացուցիչը հանդիսանում է համարյա տոննուրեք սպառազինումից զեռ նոր հանած, բայց բավարար մարտա-կան հատկություններ ցուցաբերած (մոտորի և թրթուրի վառահեղի-թյունը) Ռեկարդո սիստեմի մոտոր ունեցող V մարկայի մեծ տանկը: Նրա մարտական քաշն է 28—29 տոնն: Ջրահավորումը խուլ է (պաշտ-պանում է) զնդակներից և արկերի բեկորներից. չարժման միջին ալա-գությունը մի ժամում հավառար է 4—5 կիլոմետրի, առենամեծ արա-գությունը 7—8 կիլ. ընթացքի պաշարը հավառար է 10 ժամի (մոտ 70 կիլ.): Ճահճային զեռնով անցանելիությունը մի քիչ պակաս է քան Ռենո տանկինը. լավ է հաղթահարում մինչև 45° ուղղությունները, անցնում է 1 մետր խորություն ունեցող հուններով, մինչև 3½ մետր լայնությու-ն ունեցող փոսերով, կոտորում է մինչև 50—60 սանտիմետր հաստությու-ն ունեցող առանձին ծառերը, ավերում է 3 աղյուսի հաստությու-ն ունեցող աղյուսի պատը և լարափակոցներն ու թեթև տիպարի բլինդավորը (նկար 3):

Սպառազինությունն է՝ կամ յերկու հատ 57 միլիմետրանոց ծովաչին Գոչկես թնդանոթ և 4—5 հատ զնդագիր (անդիադինների մոտ ալյուսի

սպառազինումով տանկը կոչվում է «վորձ»), կամ 6 զնդացիր: Առաջին դեպքում զնդացրային փամփուռների պաշարն է 5400 հատ և մոտ 200 արկ թնդանոթի համար, յերկրորդ դեպքում—մոտ 1400 հատ զնդացրային փամփուռ: Հրաձգությունը կատարվում է ուղիղ նշանառությամբ: Մեռյալ տարածությունն է՝ 2—4 մետր: Գործոն կրակն է՝ 200—300 մետր: Զորախումբն է՝ 8 մարդ:




Նկ. 3 Ռեկարդո ծանր տանկի կորվածքը

V մարկայի ծանր տանկը Ռենո տանկից ավելի յերկար է, դրա համար նա կարող է հաղթահարել, վոչ թե 1,8 այլ 3,5 մետր լայնություն ունեցող փոսերը (խրամատները): Ընդհանրապես նա ավելի լուրջ խոչընդոտներ է հաղթահարում, քան թեթև տանկը և սպառազինումն ավելի ուժեղ է (նկար 4)

Ռեկարդո տանկը գործադրվում է զլխավորապես ամրացրած դերձերի վրա գրոհելու (ձեղքումների) ժամանակ, վորոնք ունենում են այնպիսի խոչընդոտներ, վոր անհաղթահարելի չեն թեթև տանկի համար (որինակ՝ մինչև 3,5 մետր լայնություն ունեցող փոսերը և խրամատները): Մասնավորապես թեթև տանկը չի անցնում ծանր արկերից դոյացած ծագարների վրայով, իսկ ուժեղ ամրացրած շերտը գրոհելու ժամանակ մարտադաշտը կծածկվի այդպիսի ծագարներով: Վերոգրյալ հին տիպի ծանր տանկը դանդաղաշարժ է և գործողության փոքր հեռավորություն ունի (մոտորի աշխատանքը հավասար է 10 ժամի):

3. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԱՆԿԵՐԸ

Արդեն խպերիալիստական պատերազմը ցույց տվեց տանկերի չափակեությունը՝ ինքնուրույն խնդիրներ լուծելու համար (հարձակում հակառակորդի թիկունքի խորքում, թեանցում և հեծելազորի հետ միասին գործողությունների համար):




Նկ. 4 Ռենո տանկի (զնայրած է) և Ռեկարդո-յի համեմատական մեծությունը

Դրա համար հին տիպարների տանկերին պակասում էր արագությունը և գործողության հեռավորությունը: Պատերազմից հետո գյուտարարները տվեցին մի ամբողջ շարք նոր արագընթաց տանկեր: Այդ բնագավառում ամենից շատ բան է արել Անգլիան, տալով փորձերի արդյունքով արագընթաց տանկերի ամենահաջող նմուշները: Դրանց են վերաբերում՝ Վինկկերս—ծանր, միջակ և թեթև տանկերը: Բացի դրանից տանկի գործում անգլիացիները գյուտերի թվում պիտի հաշվել նաև ամենաթեթև, այսպես կոչված «տանկետկա» տանկը:

ՎԻԿԿԵՐՍ ԾԱՆՐ ՏԱՆԿԸ

Ժամանակակից ծանր, արագընթաց և գործողության մեջ չառավելողով տանկի տիպարն է՝ անգլիական վերջին ծանր արագընթաց Վինկկերս տանկը, այսպես կոչված «ձեղքման տանկը»: Նրա վերջնական արագությունն է՝ մի ժամում մինչև 30 կիլոմետր (նկար 5): Այդպիսի տանկն ի վիճակի չէ հաղթահարել վոչ միայն ամրացրած շերտը այլ հաղթահարել նրան շատ արագ կերպով և արագությամբ դուրս գալ հակառակորդի խորը թիկունքը և, այնուհետ լուրջ ավերումներ և վոչնչացումներ կատարել:




Նկ. 5 Վինկկերս ծանր տանկ

5-րդ նկարում դժագրված Վինկկերս տանկն ունի 42 տոնն մարտական լաշ, սպառազինված է 4 զնդացիրով և 47 միլիմետրանոց թնդանոթներով:

բով. ամեն մի զնդացիքը և թնդանոթը տեղավորված և հասուն աշտարակում (կենտրոնական աշտարակում—թնդանոթը, իսկ անկյունային աշտարակներում—զնդացիքները) :

ՎԻԿԿԵՐՍ ՄԻՋԱԿ ՏԱՆԿԸ

Գոյություն ունին յերկու տիպի միջակ տանկ—մեկը 12 տոնն (1926 թվի տիպարի) մյուսը՝ 16 տոնն (1927 թ. տիպարի) : 12 տոննանոց Վիկկերս միջակ տանկը (նկ. 6) ստացվելով և 47 միլիմետրանոց թրնդանոթներով, 2 ծանր և 4 թեթև զնայիրով. նրա միջին արագությունը մի ժամում հավասար է 25—30 կիլոմետրի. ընթացքի պաշարը 12 ժամ է : Նա հաղթահարում է մինչև 2,3 մետր լայնություն ունեցող խրամատը և անցնում է մինչև 1,2 մետր խորություն ունեցող հունով : Տեղավորում է 5 մարդուց բաղկացած զորախումբ :




Նկ. 6 Վիկկերս միջակ տանկը

16 տոննանոց Վիկկերս միջակ տանկն ունի մինչև 45 կիլոմետր արագություն մի ժամում, հետևի մասում ունի մոտոր և հարթ զրահավորում :

ՎԻԿԿԵՐՍ ԹԵԹԵՎ ՏԱՆԿԸ

Մարտական քաշը 7,8 տոնն է : Միջին արագությունը մի ժամում մոտ 30 կիլոմետր է, առավելագույնը—35 կիլոմետր մի ժամում : Զրահը 13 միլիմետր է, վոր չի ծածկվում մինչև իսկ զրահահար զնդակով : Սպառողիչումն է՝ 2 ծանր զնդացիք (նրանցից մեկի տրամաչափը հավասար է 12,7 միլիմետրի) . մի զնդացիքի փոխարեն կարելի է զենք 37 միլիմետրանոց թնդանոթ. յուրաքանչյուր զնդացիքը ինքնուրույն կերպով տեղա-


փոխվում և պատվող աշտարակում : Զորախումբն է՝ 3 մարդ (փարոսի և 2 հրաձիգ, վորոնցից մեկը տանկի հրամատարն է) (նկ. 7) :



Նկ. 7 Վիկկերս թեթև տանկ

Վիկկերս թեթև տանկը Ռենո տանկի հանդեպ այն առավելությունն ունի, վոր միաժամանակ կարող է կրակել յերկու կրակային միավորով : Թե՛ թեթև և թե՛ միջակ Վիկկերս տանկերն արագընթաց են :

Վիկկերս նոր տանկերն իրենց զրահավորումով ներկայացնում են իրենցից գյուրաչարժ ու հզոր մեքենաներ : Այդպիսի տանկերը ընդունակ են արագությամբ հաղթահարել մեծ պարածությունը և, յերևան գալով հակառակորդի հակատուժ, թեթև կամ թիկունքում, հասցնել նրան մեծ կորուստ, մինչև իսկ մեծամարտի բռնկվելով հրետանու ղեմ : Նրանք կարող են նաև զործել հեծելազորի հետ միասին, ոգնելով նրան հաղթահարելու հակառակորդի կրակային խոչընդոտները : Այն բոլորն, ինչ վոր ասվեց մինչ այս տանկերի մասին, վերաբերում է սպառողիչման համար ըն-



Նկ. 8 Վնդացիքային տանկետիպ կարդեն-Լոյդ

դունված տանկերին : Բայց արդեն կան նոր փորձնական որինակները, վորոնք իրենց արժանիքներով խոշոր չափով զերազանցում են գոյություն ունեցողներից : Այսպես, որինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում

գոյություն ունի Կրիստի տիպարի նոր անիվա-թրթուրային տանկը, վո-
րը շարժվում է առանց ճանապարհի մի ժամում 35—40, իսկ ճանապար-
հով մինչև 80—110 կիլոմետր արագությամբ (ըստ գանազան տվյալ-
ների) :

Տանկետակ

Տանկետական շատ փոքր տանկ է, ղեկավարվում է հեշտությամբ և
ընդունակ է արագ շարժվելու (նկ. 8) :

Տանկետական ցածր է և զրա համար զժվար խոցելի յե հակառակորդի
կրակի համար, բայց զրա փոխարեն նա ունի բարակ և վոչ միապողպող
զրահավորում. տանկետական վերելից կամ միանգամայն բաց է, կամ
շատ թույլ է ծածկված: Նրա յերկարությունը հավասար է 2,5 մետրի,
այսինքն՝ թեթև տանկի յերկարությունից 2 անգամ փոքր է: Նրա լայ-
նությունը հավասար է 1,7 մետրի, իսկ բարձրությունը 1 մետրի:
Քաշը մոտ 1,5 տոնն է, այսինքն՝ թեթև տանկից մասսավորապես 1 ան-
գամ փոքր: Նա հաղթահարում է մինչև 45° ուղղորդություն ունեցող
լանջեր, մոտ 1 մետր լայնությամբ փոսը, այսինքն՝ քիչ փոքր քան թեթև
տանկը. սակայն տանկետական չի կարող անցնել սովորաբար 1,2 մետրից
ավելի լայնություն ունեցող խրամատներով: Անցնում է մինչև կես
մետր բարձրությամբ պատի վրայով և նույն խորությամբ հունը: Ան-
տառները հաղթահարել չի կարող, բացառությամբ բոլորովին մանր
թփուտի:

Նրա թեթև քաշը թույլ է տալիս նրան անցնել մինչև իսկ գյուղական
ճանապարհների, փաս կամուրջների վրայով, փոքր ի վիճակի չե անել
թեթև տանկն ամեն ժամանակ: Տանկետական ճանապարհներով շարժվում
է մի ժամում մոտ 45 կիլոմետր վերջնական արագություն և առանց ճա-
նապարհների համարյա 20 կիլոմետր, ընթացքի պաշարը 100 կիլոմ. է:
Ապագայինումը 1 հատուցավոր զնդացիը 3500 փամփուշտի պաշարով,
կամ 47 միլիմետրանոց թնդանոթ: Զորախումբը— 2 մարդ:

Հատկանալի յե, վոր տանկետական կարող է կատարել ավելի խորը և
արագ հետախուզություն, քան հեծելազորը, կամ քան անիվավոր դրա-
համեքենաները, վորովհետև վերջիններս շարժվում են առավելապես
ճանապարհներով: Տանկետականը դործադրվում են մեքենայացված
միավորություններում, այսինքն այնպիսի մարտական միավորություն-
ներում, վորոնք շարժվում են բացառապես մոտորներով (մեքենայական
քարշով) և վորոնց հիմքը կազմում են զրահամեքենաները՝ տանկերը,
տանկետականները և զրահապատ ավտոմոբիլները: Տանկետականները կարող
են դործադրվել նաև մարտական հատուկ հետախուզության համար:
Ժամանակակից տանկերն արագ են շարժվում քան առաջվա տանկերը—

նրանք ավելի զիմացկուն են: Սակայն յեթև պետք է տանկերը (թեթև)
փոխադրել մեծ հեռավորության վրա և կան դրա համար լավ ճանա-
պարհներ (խճուղի կամ պինդ և հարթ գետնուղի), սպա տանկերը կարելի
յե բեռնել մեծ բեռնակիր ավտոմոբիլներին վրա: Այդպես նրանք արագ են
փոխադրվում և լավ է պահպանվում նրանց նյութիչեն մասերը (մոտորը
և թրթուրը): Նույն կարգով կարող են փոխադրվել նաև տանկետականները,
ընդ վորում նրանց փոխադրման համար բավական են 1½—2½ տոննա-
նոց բեռնակիր ավտոմոբիլները:

Հին տիպի ծանր տանկերը, վորպես կանոն, 25 կիլոմետրից ավել
տարածության վրա փոխադրվում են յերկաթգծով հատուկ տուժալների
(պլատֆորմա) վրա:

ՏԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՐՏՈՒՄ

Տանկային զորամասերն մարտական խնդիրներն ստանալուց հետո
տեղավորվում են իրենց համար հարմար և ուղային դիտողությունից
ծածկված հավաքի շրջան կոչվող շրջաններում: Այն մարտից առաջ,
վորին տանկերը մասնակցում են, տանկային հրամատարները և հետա-
խույնները կատարում են հատուկ տանկային հետախուզություն: Հետա-
խուզությունը պարզում է թե վորտեղ են դասավորված հակառակորդի
կրակային միջոցները և վորտեղ են կարող լավ գործել տանկերը:

Հետախուզության ժամանակ տանկային ստորաբաժանումները հա-
վաքի շրջաններից անցնում են սպասողական դիրքերը (հետևակային ա-
ռաջավոր զորամասերից 3—5 կիլոմետրի վրա):

Հետախուզություն կատարելով և մարտական խնդիրը ստանալով,
տանկային հրամատարները կապ են հաստատում հետևակի հետ: Հետո
նրանք դրոհի համար յեղման դիրք են ընտրում, նշում են մարտական
կուրսը (ուղղությունը դեպի դրոհի վայրը) և վորոչում են սպասողական
և յեղման դիրքերից շարժվելու կարգը և ժամանակը: Վերջապես խոն-
դիրները լուծելուց հետո, նշում են հավաքի տեղը և ցույց են տալիս
անդի և տանկերի նորոգման կարգը: Յեղման դիրքերը, այսինքն այն
դիրքերը, վորտեղից տանկերը պիտի դրոհի գնան, զբաղվում են նրանց
կողմից վոչ չուտ, քան դրոհից 2 ժամ առաջ, վորպեսպի ժամանակից չուտ
հայտարարվեն: Մարտական կուրսը սահմանվում է վոչ թե դեպի դրո-
հի վայրն ուղիղ. դժով, այլ տանկերի համար ավելի ձեռնտու ճանա-
պարհով,—այնտեղով, ուր խոչընդոտներ չկան և կրակից պահվելու
պատասխարան կա:

Մարտի ժամանակ տանկային դասակը դործադրում է այն կարգը,
վորի ժամանակ տանկերը դասավորվում են մի գծաշարում—թեթև
տանկերը 50-ից մինչև 100 մետր, ծանր տանկերը—100-ից մինչև 150

մետր միջանցներով դասակի հրամատարի տանկը տեղափոխվում է մեջ-տեղում :

Տանկային վաշտի մարտական կարգն է՝ կամ 3 դասակ դժաշարով կամ 2 շարան (առաջին շարանում մի դասակ, յերկրորդում յերկու կամ ընդհակառակը), կամ թե 3 շարան (դասակը դասակի յետևից) : Հետև-կայությունը շարանների միջև 200—400 մետր է, իսկ միջանցները դա-սակների միջև 150—ից մինչև 600 մետր :

Դասակն աշխատում է գրոհի վայրը գրոհել յերեք կողմից : Վաշտը և դասակը ղեկավարվում են հրամատարի անհատական օրինակով (ա-րա, ինպես յես), ղերչակների ազդանշանի ուղևորությամբ, կամ ռազիո-յով (ռազիոն վաշտապետի և դասակապետի մոտն է) :

Տանկերի և մարդկանց շարքից դուրս գալու դեպքում կան պահեստի տանկեր և պահեստի մասնագետներ :

ՏԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԷՆՏԵՎԱԿԻ ՀԵՏ ՍԵՐՅ ՀԱՄԱ-ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԱՀՊԱՆԵԼՈՒՆ

Յերբ տանկերը դործում են հետևակի հետ սերա համագործակցու-թյուն պահպանելով, այն ժամանակ տանկային զորամասերը սովորա-բար կցվում են այն հետևակին (մտնում են ժամանակավորապես նրա ստորադրություն մեջ), վորին ողնում են, ճիշտ այնպես, ինչպես հե-տևակին կցվում են հրետանին, սապյորներ և քիմիական զորավաճառներ և այլն :

Ինչպես են համագործակցում տանկերը և հետևակը : Կարող է պատահել, վոր հետևակը մարտի զնա տանկերի հետ կողք-կողքի, ար-մունկ-արմունկի կամ նրանց հետևից պոչում, յերբեք նրանցից հե-տ մնալով :

Վոչ, այդպես չէ : Բանն այն է, վոր տանկերը հետևակից ավելի արագ են զնում և վոր ամենազլխավորն է հետևակը պիտի ծածկվի հակառակորդի զնդացրային կրակից : Իսկ տանկերի համար զնդացրա-յին կրակը սարսափելի չէ : Տանկերը ցրվում են մարտադաշտում, վոր-պեսզի խուսափեն հակառակորդի հրետանային կրակի տեղումներից, վորից նրանք վախում են, իսկ վորքան տանկն արագ է շարժվում, այն-քան հրետանին զժվար է դիպնում նրան :

Ավելին—յեթե հետևակը սեղմվի դեպի տանկերը, կպչի նրանց, ապա նա կորուստներ կկրի այն հրետանային կրակից, վորը հակառա-կորդի կողմից ուղղվում է տանկերի վրա :

Հետևակի հրամատարը տանկերին չի հրամայում թե «զնա այսպես և վոչ այնպես» : Նա ասում է տանկային հրամատարին՝ «Իմ գումար-տակին հրամայված է գրոհել և զրավել թիվումներով բարձունքը : Այդ

բարձունքի վրա յեն գտնվում հակառակորդի զնդացիները : Ոգնի՛ր ինձ գրավելու այդ բարձունքը՝ զնա՛ և վոչնչացրու այդ զնդացիները, իսկ յես տանկերի հետևից գումարտակով կշնամ գրոհի և կզրավեմ բար-ձունքը» :

Հետևակի և տանկերի հրամատարները պետք է լավ պայմանավոր-վեն իրար հետ : Տանկային ստորաբաժանման (վաշտի, դասակի) հրա-տարը խնդիր է ստանում հետևակի (գումարտակի, վաշտի) հրամա-տարից թե՛ տանկերը յերբ, վորտեղ և ինչպես պիտի ողնեն հետևակին և ինչ պիտի անի վերջինս :

Իսկ տանկային հրամատարները պիտի ցույց տան, թե նրանց հա-մար ինչ ողնություն և հարկավոր հրետանու, սապյորների կողմից և այլն : Հրետանին պետք է պահպանի տանկերին հակառակորդի հրանոթնե-րից, իսկ սապյորները պետք է ողնեն տանկերին հաղթահարելու այն խո-չընդոտները, վորպիսիք նրանք հաղթահարել չեն կարող (խորը և լայն ա-ռունները, ծանր տանկերից դոյացած ծաղարներն և այլն) : Հետևակն ել պետք է ոգնի տանկերին իր զնդացրային կրակն ուղղելով հայտարարված հակառակորդի հակատանկային դենքի դեմ : Հակատանկային միջոցներն այնպես են կատարելագործվել, վոր տանկերը բոլոր դեպքերում պիտի ստանան հետևակից զնդացիների և հրետանու վստահելի ողնություն :

Պատմվածք, Թե տանկերն ինչպես են գործել հետևակի հետ

Հակառակորդն ուժեղ կերպով կռվում էր, բայց վերջապես ցնցվեց և նահանջեց : Սակայն 2 օրից հետո մենք նորից դեմ առանք նրա զորեղ, առջևից լարափակոցով պատած պաշտպանություն : Մեզ չհաջողվեց հա-կառակորդին միանգամից դուրս վանել : Մեր առաջավոր զորամասերը հանդիպեցին զնդացրային կազմակերպված կրակին և պառկեցին լարա-փակոցին չհասած 300—400 մետրի վրա : Մեր վաշտը գտնվում էր 2—րդ շարանում : Մեզ նախազգուշացրին, վոր հաջորդ օրը լուսաբացին մենք գրոհելու յենք հակառակորդին :

Իրկնադեմին, հրետանային մի քանի ժամվա մարտից հետո, դա-սակի մոտով, մեր գումարտակի հրամատարի հետ միասին զազանա-զողի առաջ էր անցնում սե կոճկառի վրա 3 քառակուսիկ ունեցող հրա-մատարը : Մենք լսեցինք, թե ինչպես, մեր մոտով անցնելիս, գումար-տակի հրամատարը հարցրեց նրան, վորտեղից ելին կրակում հակա-ռակորդի զնդացիները և թնդանոթները : Հետևելով նրանց, մենք տե-սանք թե ինչպես նա, գաղտնազողի հասնելով առաջավոր զորամասերին, յերկզիտակով ուշադրությամբ նայում էր հակառակորդի կողմը : Հետո նա սողաց կատարի հետևը և գումարտակի հրամատարի հետ միասին մեր մոտով հետ գնաց : Հետագայում դասակի հրամատարից մենք ի-մացանք, վոր նա տանկային դասակի հրամատարն էր :

Իրիկնադեմին դասակի հրամատար ընկ. Վատունին ասաց ջոկերի

Հրամատարներին՝ «մենք վաղը հակառակորդին զրոհում ենք: Մեր դասակը զրոհում է հակառակորդի զնդացրին, ա՛յ այն կետում, ուր առանձին թիվում կա: Գրոհելու ժամանակն է՝ լուսարացից հետո: Գրոհի սղդանչանն է՝ կարմիր հրթիռներ»:

Արևը մայր մանկուց առաջ դասակի հրամանատարը ջուկերի հրամատարներին հայտնեց՝ մեր դամարտակին կցված է տանկերի վաշտը: Տանկերը կզնան հարձակման գրոհի հետևակի առջևից: Յեղման դիրքերից տանկերի դուրս դալը կծածկվի ծխածածկույթով: (տես 1 և 2 հարցերը 33—34 յերեսները):

Մոտավորապես դիշերվա ժամը մեկին մեր յերկու մարտկոցները հաճախակի կրակ բացին բարձունքում հրետանային կրակից այլովոյ ջաղացի ավերակների ուղղությամբ: Հակառակորդն արթնացավ և պատասխանեց հրետանային և զնդացրային անհաջող կրակով: Այդ յերկուստեք հրաձգությունը շարունակվեց 40 րոպե, դուցե և մի ժամ: Վերջուպես ամեն ինչ լռեց: Միայն հետո մենք խմացանք, վոր հրաձգությունը կադավակերպված է յեղև նրա համար, վոր կրակոցների հնչյունների տակ թաղցնենք տանկերի մոտորների սղմուկը թրթուռները դղրդոցը, տանկերի կողմից յեղման դիրքերը գրավելու ժամանակ: Միաժամանակ ույդ հրաձգությամբ ծածկվեց հարևան տեղամասում հետախույզների արդելքը գերիներ ընկելու համար: Այլևս ջուկներս չեր տանում: Մեր դասակի հրամատարը բցատրեց մեղ հետևյալը. —

— Վաղն, ընկերներ, հակառակորդի վճռական զրոհն է: Պետք է նրան ջարդել այնպես, վոր նա ուշքի չգա: Ոգնություն համար մեզ արված են թեթև տանկեր: Մի ամբողջ վաշտ—10 տանկից: Հիշեցեք—տանկերը մեզ համար լարավաղոցներում անցքեր կբանան: Դրա համար նրանք յեղման դիրքերից մեղնից վաղ կչարժվեն: Մենք նրանց հետևից կզնանք այն ժամանակ, յերբ նրանք անցքերը կբանան: Դրանից հետո տանկերն առաջ կզնան վոչնչացնելու հակառակորդի զնդացիները, իսկ մենք կչարժվենք նրանց հետևից: Մի կառչեք տանկերի սղոնից, մի վազեք նրանց հետևից: Տանկը կզնա մերթ դեպի աջ, մերթ դեպի ձախ, դուցե և ուղղակի հեռանա մեր ուղղությունից:

Նա թե զնդացիը նկատել, թե՛ հակառակորդին թնդանոթ և թե՛ խոչընդոտ մեկ է պետք և դրանց չուրջն անցնի: Հարձակվելու յենք տանկերի հետևից 200 մետրի հեռավորությունից վրա: Յեթե վաղը հակառակորդի կրակից ծածկված լինի, սպա կարելի չէ և ավելի մոտենալ տանկին:

Լավ հիշեցեք, — տանկերը կարող են չնկատելով բաց թողնել հակառակորդի վորեւե զնդացիը: Դրա համար ուշադիր յեղեք—պատրաստի պահեցեք հրացանները և զնդացիները: Հարմարվեցեք տեղին: Մինչև

յերեկո մենք բոլորս տեսանք հակառակորդի վաշտը—մերթ կանաչ խոտ է, մերթ թփուտներ: Թագնվեց հակառակորդի զնդացիը և կլախ, վորպես տանկը նրան չնկատել: Տանկից դիտելն այնքան էլ հեշտ չէ, վորովհետև տանկից վատ է յերևում, իսկ լսել ամենեին չես կարող—և ճոճում է, և այս ու այն կողմն է նետում, մոտորն է աղմկում, դղրդում են թրթուռները: Հակառակորդի զնդացիը լուրթյամբ թույլ կտա տանկին յուր մոտով անցնելու, իսկ մենք յերբ գրոհի զնանք, նա կուղղվի մեզ վրա արձիճը:

— Ընկեր հրամատար, թույլ տվեք, — խոսեց կարմիր բանակային Պետրյուկովը: Նա պահեստից եր կանչված և շատ բան չգիտեր և առհասարակ ծուլութունից քիչ եր հետաքրքրվում վորեւե բանով: Քնկոտ եր, և ընկերները նրա վրա քիչ էյին հույս դնում:—Ընկ. հրամատար, ախր ի՞նչ սարկերություն կա, թե՛ մենք տանկերով, ենք կավում կամ առանց տանկերի: Բոլորը մեկ է իմ կարծիքով—և այնպես են «հնձում» մեզ հակառակորդի զնդացիները և այստեղ էլ են յերեվան դալիս ու էլի հնձում:

— Ընկ. Պետրյուկով, դուք ե՛՛ ճիշտ եք ե՛՛ սխալ:

Տարբերությունը մեծ է: Ասացեք, տանկերը լարավաղոցներում անցքեր բացո՞ւմ են: Բացում են: Հրետանին անցքը բացում է ամբողջ յերկու ժամվա ընթացքում, ծախսելով դրա վրա 200—250 արկ, իսկ տանկը բացում է մի քանի րոպեյի ընթացքում: Տանկերը զնդացիներին լռեցնո՞ւմ են: Լռեցնում են: Կարո՞ղ են արդյոք նրանք լռեցնել բոլոր զնդացիներին: Վոչ, չեն կարող, վորովհետև զնդացիներին մի մասը կարող է տանկերի համար աննկատելի մնալ: Բայց տանկերը կարող են ավելի շատ և ավելի արագ զնդացիներ վոչնչացնել, քան հրետանին:

Վորպեսզի շատ զնդացիներ վոչնչացնեն, տանկերը պետք է լավ հետախույզեն նրանց գտնավորությունը:

Դուք տեսաք, թե ինչպես դեռ ցերեկը սողալով մեզ մոտեցավ վոմն, հրամատար հրետանային կոճկատներով: Դա տանկիստ եր: Լսե՞ցի՞ք թե ինչպես նա հարցրեց, վորտեղ են մեր առաջավոր զորամասերը, վոր կողմից էյին կրակում զնդացիները, չնկատեցի՞ք, վոր կողմից էյին կրակում թնդանոթները: Վորքան նա շատ ստույգ անդեկութուններ ունենա, այնքան նա շատ զնդացիներ կջախջախի և այդպիսով մենք դուրսությամբ կզնանք գրոհի: Իսկ անդեկութուններ մենք նրան շատ կարողացա՞նք տալ: Ենքան էլ չէ: Հույս դնելով առաջավոր զորամասերի վրա, մենք լավ չգիտեցինք մարտադաշտը և այդ պատճառով քիչ ոգնեցինք տանկիստին:

Ասկայն բացի մարտից առաջ կատարած հետախույզությունից, տանկերին պետք է ոչնեկ մարտում և զնդացիների, նոսակների և հրե-

տանու կրակով: Տանիկերը բոլորին հսկել չեն կարող: Մշտապես տանիկերի համար անսպասելի հայտնվում են հակառակորդի հակառակակային թնդանոթը: Մենք, հետեակներս, ամեն ժամանակ պիտի հետեենք նրա յերևան գալուն: Հենց վոր յերևաց, անմիջապես կրակ բացիր նրա վրա զնդացրով, հրացաններով կամ նռնակներով, հաղորդիր մարտկոցին, վորպեսզի նրա վրա կրակ բանա: Նման թնդանոթը, յեթե նրան չնկատես, կարող ե շարքից հանել մի քանի տանիկեր: Վաշտի հրամանատարը մեզ պատմում եր, վոր մի անգամ, իսպերիալիստական պատերազմի ժամանակ, լավ քողարկված մի թնդանոթ շարքից դուրս հանեց մի քանի տանիկեր:

Յեւ այդպես, ընկերներ՝, մարտում վոչ միայն տանիկերն են ոգնում հետեակին, այլև հետեակը նմանապես ոգնում ե տանիկերին: Տանիկից վատ ե յերևում թե մարտադաշտում ինչ ե կատարվում: Տանիկերը ճոճվում են, նայելու անցքերը շատ փոքր են և հրնդումից թռչում են աչքերի առաջ: Հակառակակային հրանոթը կարող ե հեշտությամբ աննկատելի մնալ, կամ կնկատվի այն դեպքում միայն, յերբ նա կվոչնչացնի արդեն մի քանի տանիկեր: Հետեակը (և հրետանին իհարկե), պետք ե նշանակի հակառակորդի հրանոթները հայտաբերելու համար հատուկ դիտողներ:

Թեպետ և մարտում դժվար ե գետնից դիտել, բայց հաճախ այնպես ե պատահում, վոր հետեակ բանակայինները չուտ են հայտաբերում հակառակորդի հրանոթը, քան զրահում նստած տանկիստները: Վորքան ել հետեակ զորամասին տանիկեր չկցվեն, հետեակն ուշադիր պիտի վերաբերվի նրանց պահանջներին և խնամի նրանց, ցույց տալով մարտում նրանց մշտական աջակցութիւն կրակով և թիով:

— Իսկ վոր ամենազլխավորն ե, ընկեր Պետրյուկով՝, հիշեցեք, վոր չի կարելի անփութ լինել: Թուլացավ հակառակորդի զնդացիների կրակը, վազեվազք կատարիր դեպի առաջ: Գնդացիները կրակ բացեց, իսկ տանիկերը նրան չեն տեսնում, ինքը կրակ բացիր այդ զնդացիի վրա: Հաղորդիր հրետանուն: Հարձակումդ շարունակիր:


— Մի բանում ե ճիշտ ընկեր Պետրյուկով՝ ամենից առաջ մենք պետք ե հույս դնենք մեզ վրա, նաև այն դեպքում, յեթե մարտ ենք մղում տանիկերի հետ միատեղ: Իսկ յեթե հանկարծ բոլոր տանիկերը հակառակորդի կողմից ջարդ կրեցին: Ի՞նչ անել այդ դեպքում: Պարզ ե, հարձակումը պետք ե շարունակել առանց տանիկերի: Յերբեք չպիտի մոռանալ մեր կրակային միջոցների—հրացանի և գնդացիի մասին: Հասկանալի՞ ե, ընկերներ՝:

Լուսադեմին մեր վաշտը բարձրացավ և շարժվեց դեպի առաջավոր

զորամասերը, վորոնք գտնվում եյին հակառակորդից 300 մետրի հեռավորության վրա:


Լուսացավ... Հանկարծակի մեր ամբողջ հրետանին կրակ բացեց հակառակորդի տեղավորության բարձունքների վրա (հարց 3, յերես 34):

Բարձունքներն արկերի պայթյուններից ծածկվեցին ծխով և փոշով: Քառորդ ժամ անց մեր առաջավոր ջոկերի գծում ծխացին ծխադրլանները: Քամին բարենպաստ եր, ծուխը խիտ քուլաներով շեղակի քչեց հակառակորդի կողմը: Յեւ յերբ հակառակորդի վողջ դասավորությունը ծածկվեց ծխի հետեում (հակառակորդը զնդացրային և հրետանային անկանոն կրակ եր վարում), հետեից մենք աղմուկ լսեցինք և անմիջապես տեսանք 5 տանկ, վորոնք հետեակի տեղավորության վրայով գնում եյին դեպի տան կողմը, այսինքն՝ դեպի հակառակորդը: (Ուլ. 9): Հրետանային և գնդացրային մարտի դրդոցների մեջից, յերբ տանիկերն անցան մեր մոտով, մենք հաղիվ եյինք տարբերում նրանց աղմուկը մոտորների աղմուկից: Կարծես հետեակ զորամասերի արանքում լողա-



Նկ. 9 տանիկերն արագ դնում են ծխի կողմը

լով, տանիկերն արագ անցնում և անհետանում եյին ծխում: Իսկ 5 բուլեանց, յերբ ծուխը մասամբ ցրվեց և լողաց ավելի հեռու, հակառակորդի դասավորության խորքը, յերեվաց, վոր տանիկերը հասան լարափակոցներին, միավեցին նրանց մեջ և սկսեցին անցքեր բացել հետեակի համար (Նկ. 10): Անկանոն կերպով, առանց վնաս հասցնելու տանիկերին, պայթում եյին նրանց շուրջը հրետանային արկերը:



Նկ. 10. Խորացան լարափակոցների մեջ, հետևակի համար անցքեր բանալով




Նկ. 11 Տանկերը դրոշի գնացին թփուտների վրա, փորակելից յերեկ կրակում ելին գնդացիները

Ծուխը դեռևս կախված էր հակառակորդի կողմից գրավված բլուրների վրա, կուրացնելով նրա դիտողներին։ Տանկերն անցքեր բացեցին և դրոշի գնացին թփուտների վրա, փորակելից յերեկ կրակում ելին դրագացիները (Նկ. 11)։

— Կարմիր հրթիռներ—գոռաց զինուղ՝ ընկեր Սերգեյեվը։

Դա դրոշի գնալու արդանշանն էր։ Տանկերը յերեւում ելին կիսախափարի մեջ։ Հետևակը բարձրացավ և առաջ գնաց։ Հախառակվելով ընդհանուր թափով, ուրախ և անհուգ Կոնդակովը, հարեան ջոկից ամբողջ հաստիով վազեց առաջ, աշխատելով հասնել տանկերին։ Բայց տանկերից քիչ հեռու ընկավ գնդացրային կրակից։ Մի ճակատից մյուսը, մի խորշից մյուսը, արագ վազեցրով առաջ էր շարժվում Սիդորչուկի ջոկը։ Սիդորչուկը տեսավ թե ինչպես մի տանկ հանկարծ քթով ցած նետվեց— նա ընկավ թփուտներով ծածկված խոր խորսը։ Պարզվեց, վոր տանկերի




Նկ. 12. Տանկն ընկավ խոր փոսի մեջ

առջև ընկած և նրանց համար անանցանելի խոչընդոտ—խոր առու։ Գնդացիներով կրակ վարելով նրանք գնացին դրանց շուրջն անցնելու։ Սիդորչուկը ձեռքով նշան արավ։ «Առաջ»։ ջոկն սկսեց վազել առվի միջով, վորին տանկերը չըջագայում էին։

— Առաջ—դուչեց Սիդորչուկը, յերբ ամբողջ ջոկն արդեն վազել էր։ Ի՞նչպես առաջ գնալ առանց տանկերի։ Չէ՞ վոր ասված էր, վոր հետևակը հարձակվում և տանկերից հեռու։

Բայց Սիդորչուկի ջոկը դուրս թափվ առվից և վազեց ավելի հեռու (հարց 4, նայիր յերես 34)։ Այլից ձեռքի գնդացիները կրակում և հակառակորդի գնդացրի վրա։ Առաջ—դեպի բարձունքը։ Այդ պետք և գրավել։ Այնտեղից—գնդացիները կրակում և։




Նկ. 13. Տանկերի և հետևակի շարժման սխեմա

Բայց տանկերն, խոչընդոտի շուրջն անցնելուց հետո ուղղվեցին դեպի բարձունքը և նորից ընկան հետևակի առաջ... նրանք գրոհում են

բարձրունքը • տանկերից մեկը տակովն արավ գնդացիները, ջնջխեց նրան և վոչնչացրեց նրա մարդկանց :

Սիդորչուկի ջուկը դրավեց բարձրունքը...

Հավասարվեցեք առաջինների հետ... Տանկերն առաջ գնացին և հասան թիփուտներին, ուր յենթարկվեցին զորեղ հրաձգության (նկ. 14), իսկ դուրս դալով անտառի հակառակ ծայրը հանդիպեցին յերեք թընդանոթի կրակի: Սակայն այդ հրանոթների յերևան դալը դեռ վաղուց եր նկատվել հրետանային հրամատարի կողմից: Նա մարտկոցով անհապաղ կրակ բացեց նրանց վրա... Շուտով դրան միացավ և մյուս մարտկոցը... Հակառակորդի յերկու թնդանոթը հաղթված են... Յերրորդը քաշեցին կատարի հետևը...




Նկ. 14. Տանկերը հանդիպեցին ձեռքի նռնակների կրակի

Այդ ժամանակ մեր վաշտը հասավ թիփուտներին... Անտառի ծայրում նրա վրա ձեռքի նռնակներ նետեցին. դա հակառակորդի հետևակի մի մասն էր, տանկերին առաջ բաց թողնելով, մնացել եր հանդիպելու մեր հետևակին: Սվինի հարվածով, հարևան վաշտի աջակույթյամբ, վորի առջևից դնում եր տանկերի դասակը, հակառակորդը դուրս քշվեց թըփուտներից... Մեր զորամասերը հարձակվում են հեռուն, արագությամբ առաջ շարժվող տանկերի հետևից:

Վաշտն անցնում է անտառի միջով... Հանկարծակի նրան թևից զրոհում է հակառակորդի հետևակ վաշտը: Մենք մեծ կորուստ ենք տալիս նրա թևային գնդացիների և նռնակների կրակից: Ուսումնասիրություն տեղի ունեցավ, և վաշտը քիչ հետ գնաց: Բայց այդ ժամանակ տանկային վաշտի հրամատարի տանկը դուրս յեկավ մեզնից ձախ դանդաղ անտառից, նա աղդանշան տվեց և մենք տեսանք թե ինչպես մեր տանկերը շուտ յեկան և, ամբողջ թափով կրակ բանալով, միավեցին հակառակորդի հետևակի մեջ (նկ. 15): Տալով մեծ քանակությամբ սպանվածներ և վի-

րավորներ հակառակորդի հետևակը խուճապով վախով դանդաղան կողմերը, աշխատելով անտառում ծածկույթ գտնել տանկերից: Մեր վաշտը նորից հարձակման անցավ, դուրս քշելով անտառի յեզրից հակառակորդի խմբերին և հավաքելով դերիններին:

Շուտով մեր դամարտակը տիրեց դյուղը, իսկ տանկերը կատարելով իրենց խնդիրը, անցան ծածկույթի հետև, վորպեսզի բացեն լծակները, սառեցնեն մոլորները, խմբի բանակայիններին հանդիստ տան և նոր խնդիր ստանան: Տանկային վաշտը 2 տանկ կորցրեց (յերկրորդ տանկը, հարևան դասակից, վնասվեց հրետանային կրակից):




Նկ. 15. Տանկերի դասակը միավեց հակառակորդի հետևակի մեջ

Մենք տեսնում ենք, վոր տանկերը ժամանակին ողնեցին հետևակին, նրանով, վոր վոչնչացրին հակառակորդի հակազոր հոգ վաշտը: Յեթե նրանք այդ չանեյին, ապա մեր վաշտն անկասկած բավական կուշանար, մեծ կորուստ կկրեր և թերևս հակառակորդը նրան հետ կշարտեր: Այդ ողնությունը հաջողվեց շնորհիվ նրան, վոր տանկերը հետևակի հետ տեսողական կապ եյին պահպանում: Տանկային վաշտի հրամատարը միշտ դիտեր թե հետևակը վորտեղ է և ինչ է անում: Ինչպես մենք այժմ տեսնում ենք, հետևակը պետք է կոխվ մղի և՛ տանկերի մասնակցությամբ, և՛ առանց նրանց: Տանկերը միայն թեթևացնում են հետևակի խնդիրը և փրկում են նրան իդուր կորուստներից:


Այն մարտում, վորի մեջ մասնակցում եր իր ջուկով ընկ. Սիդորչուկը, տանկերն ուղեկցում եյին հետևակին և գործում եյին նրա հետ սերտ համադորձակցությամբ: Նրանք ունեյին հետևակի հետ ընդհանուր խընդիրներ: Սակայն նրա հետ կապված չեյին: Վոչ հետևակը և վոչ տանկերը չեյին խանգարում մեկը մյուսի գործողություններին և միայն հետևում եյին իրար և ողնում: Հետևակին ուղեկցող տանկերը, նրանից հեռու անջատվել չեն կարող և կորցնել նրա հետ տեսողության կապը

(500—600 մ.), ալյուպեա այնպիսի զլուծյուն կտակգծվի, վոր հետևա-
կը չի կարող ոգտագործել տանկերի ձեռք բերած հաջողությունը:



Նկ. 16

Հետևակը վոչ մի զեպըում չպետք է զերտի միայն տանկերի գոր-
ծողությունները՝ նա պետք է ոգնի նրանց կրակով, ոգտագործելով
նրանց հաջողությունները:



Նկ. 17.

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ բան է յերման դիրքը տանկային գրոհի համար:

Դա այն դիրքն է, վորտեղից տանկերը նետվում են գրոհի: Նա
ընտրվում է այն հաշվով, վորպեսզի տանկերը հակառակորդից
քաճուն մոտենան, գրավեն այն, և այնտեղ ծածկված մնան մին-
չև գրոհի րոպեն: Մյուս կողմից տանկերի յերման դիրքերը, ըստ
հնարավորության, պետք է մոտիկ լինեն հետևակի առաջավոր
մասերին, վորովհետև տանկերին ձեռնտու յե, վորքան կարելի
յե, կարն ժամանակում անցնել հակառակորդի հրետանային գըն-
դակոծի տակ (նկ. 16 և 17): Յերման դիրքը գրավվում է կամ ան-
միջականորեն գրոհից առաջ, կամ նրանից քիչ առաջ (2 ժամից վոչ
շուտ) և ահա քե ինչու՝ յեքե հակառակորդը գլխի էլ ընկնի տան-
կերի գրոհի մասին, ապա նրա համար այնքան քիչ ժամանակ
կմնա, վոր չի կարող անհրաժեշտ և լուրջ միջոցների դիմել տան-
կերի գրոհի հանդեպ: Յերման դեպքում ամեն մի տանկ դասա-
վորվում է իրեն համար ձեռնտու և հարմար ծածկույթի հետևը:

2. Ի՞նչի համար է պետք ծխածածկույթը:

Դա պետք է նրա համար, վորպեսզի հակառակորդից տանկերը
ծածկեն նրանց յերման դիրքից շարժվելու ժամանակ: Ծխածա-
կույթը հակառակորդին հնարավորություն չի տալիս դիտել իր

կրակը, ծածկում է նրանից տանկերի ստույգ քիվը և նրանց մար-
տական կարգը:

3. Ի՞նչի համար հրետանին կրակ բացեց բարձունքների վրա:

Հակառակորդի դիտողության կետերը գտնվում ենին բար-
ձունքների վրա: Նրանց պետք էր կուրացնել, վորպեսզի հակա-
ռակորդի հրետանին չկարողանա կրակել գրոհի գնացող տանկե-
րի վրա: Այդ նպատակով էլ բաց քողովեց ծխածածկույթը: Այդ
բոլորով ապահովեց տանկերի աննկատելի մոտեցումը հակառա-
կորդին:

4. Ինչու՞ և ինչի՞ համար Սիդորչուկը հասնելով տանկերին,
հրամայեց չոկին առաջ անցնել: Զե վո՞ր տանկերը պիտի մաքրեն
հետևակի նամապարհը:

Դա նիշտ է, վոր պիտի մաքրեն: Սակայն այնպես պատահեց,
վոր տանկերը պիտի խուսափեյին խոչընդոտից: Միևնույն ժամա-
նակ հակառակորդի գնդացրային կրակը քուլացավ: Զոկի հրա-
մատարը նիշտ վորոշեց ոգտագործել հակառակորդի քուլը կրա-
կը և առաջ շարժվել, առանց տանկերին սպասելու: Իսկ տանկե-
րը միշտ կարող են հասնել հետևակին: Բացի դրանից, խուսա-
փելով խոչընդոտից և հետևաբար հետևակից հետ մնալով, հա-
մենայն դեպս աչքաքող չարին նրան, այլ շարունակեցին աջակ-
ցել նրան գնդացիրների և քնդանոթների կրակով (նկ. 13):
Զպիտի մոռանալ, վոր տանկերը կարող են կրակել վոչ միայն այն
ուղղությամբ, ինչ ուղղությամբ վոր նրանք գնում են, այլև ու-
րիշ ուղղությամբ, կամ ինչպես ասում են «կրակել վարել անկյան
տակ»:

ՏԱՆԿԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՎ ՄԱՐՏԻՑ ԴՈՒՐՍ ԳԱՆՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Տանկերը զլխավորապես հարձակման զենքն են: Նրանց հիմնական
խնդիրն է—հակառակորդին ուժգին հարված հասցնել, հարթելով հե-
տևակի և հեծերազորի ճանապարհը, կամ գործելով ինքնուրույն, կա-
տարել ընդհանուր խնդիր: Սակայն տանկերը հաջողությամբ կարող են
ոգտագործվել նաև պաշտպանության ժամանակ: Պաշտպանության մեջ
տանկերի ոգնությունը հետևակին մանավանդ այն ժամանակ է պետք,
յերբ հակառակորդը պիտի է սլմում, հետևակը մեծ կորուստ է տվել,
իսկ հետ քաշել չի կարելի: 1918 թ. Փրանսիացիները դիմադրում էին
դերմանական բանակի յեռանդուն հարձակմանը, մեծ թվով տանկեր
գործ զնելու չնորհիվ: Իսկ ինչպես պետք է գործադրել տանկերն այդ-
պիսի մարտում: Պաշտպանության ժամանակ պետք է ոգտագործել տան-

կերել բոլոր գործող հատկութիւնները—վոչ միայն նրանց կրակը և գրա-
հը, այլև գլխավորապէս նրանց շարժունութիւնը: Պաշտպանութեան
ժամանակ տանկերը գործում են, ինչպէս ասում են, հարձակողական
յեղանակով: Դրա համար տանկերը կարող են գործադրել միայն խոշոր
զորամասերի հակադրոհի կամ հակահարվածի ժամանակ, ոգնելով
հարվածային խմբակին:

Պատմվածք պաշտպանութեան ժամանակ տանկերի գործողութիւնների
մասին

Ընկ. Սիդորչուկի ջոկը հարձակման ժամանակ տվեց 2 վիրավոր:
Դասակի մյուս ջոկերը գրեթե նույնքան կորուստ տվին: Տանկերը
հզոր աջակցութիւն ցույց տվին հետևակին: Դիվիզիան մի օրում ան-
ցավ 15 կիլոմետր թշնամու դասավորութեան խորքը, մեծ հաղթութիւն-
ներ տարավ և վերցրեց մեծ քանակութեամբ գերիներ:

Սակայն հեռուն շարժվել չհաջողվեց: Հակառակորդը նահանջեց
գետի մյուս կողմը՝ և պաշտպանվեց նրա հակառակ ափում: Թեպետ և
գետը չառ մեծ չէր, բայց տանկերի համար անանցանելի յեր, ուղղորդ
ափերի շնորհիվ (հարց 5 նայիր յերես 42):

Զորամասերին կանգ առնել տվին նոր հարձակում պատրաստելու հա-
մար: 2-րդ վաշտը (վորտեղ ծառայում էր ընկ. Սիդորչուկը) մտավ
գնդի հարվածային խմբակի կազմի մեջ: Նրան պետք է հանդատութիւն
տրվեր, լրացվեր և կարգի բերվեր ծանր մարտերից հետո

Նախորդ մարտերում մասնակցած տանկային զորամասերը հետ տար-
վեցին և տեղավորվեցին ճակատի գծից 4—5 կիլոմետրի վրա: Զոկի հրա-
մատար ընկ. Սիդորչուկը գիտեր, վոր տանկերը դտնվում են անտառում
գետի մոտ: Տանկերն էլ կորուստ տվին: Այն վաշտից, վորն ոգնում էր
առաջին դումարակին, մի տանկ, ընկնելով խորը խոտի մեջ, մնաց մար-
տադաշտում: Յերկրորդ տանկը ջարդվեց հրետանային արկից և նրա մեջ
սպանվեցին տանկի հրամատարը և վարորդը: Առաջին տանկը փոսից
դուրս բերվեց տրակտորի միջոցով, վորն ողակի հետ միասին յեկել էր
փչացումները վերացնելու համար:

Յերկրորդ տանկն անմիջապէս բուքսիրի վերցնել չէր կարելի և
հատուկ աշխատանքներից հետո տանկը դուրս բերեցինք տանկային գու-
մարտակի միջոցներով:

Դիչերն անհանգիստ անցավ, վորովհետև հակառակորդը գնդակո-
ծում էր հրե. չրակով թե ճանապարհները, թե անտառները և թե գյու-
ղը:

Առաջնային հրետանային կարճ պատրաստութիւնից հետո,
հակառակորդի հետևակը հանկարծակի անցավ գետի հոնով և դրոհեց

մեզ: Դաժան մարտից հետո մեր առաջավոր զորամասերը, մեծ կո-
րուստներ կրելով, սկսեցին հետ նահանջել:

Ահա այստեղ էր, վոր գնդի հարվածային խմբակը հրաման ստացավ:
2-րդ վաշտի հրամատարը վերադառնալով դումարտակի հրամատա-
րի մոտից, կանչեց դասակի հրամատարներին և ասաց՝ «Հակառակորդը
ներս է խուժել մեր դասավորութեան մեջ: Մեր վաշտը տանկերի դասա-
կի հետ միասին այստեղից անցնում է հակադրոհի ա'յ այն բարձունքի
վրա, ուր յեղեմյնիներն են: Այլից հակառակորդին դրոհում է առաջին
վաշտը տանկերի աջակցութեամբ: Մեր խնդիրն է՝ յետ չարտել հակա-
ռակորդին դեպի յետևը: Անցնում ենք հակադրոհի հենց այժմ: Գնդային
գիվիզիոնն արդեն կրակ է վարում: Տանկերը կհասնեն մեզ: Հայտնեցեք
այդ մասին մարտիկներին:

Վաշտն արագ բացադատվեց մարտական կարգի և արագ հակահար-
ձակման անցավ հակառակորդի վրա, վորն արդեն առաջավոր մասերով
գրավել էր յեղեմյնիներով բարձունքը: Գնդային մարտկոյը, առանձին
հրանոթներով առաջ շարժվելով, գիպուն կրակ բացեց հակառակորդի
գնդացիներին և հրաձիգներին վրա, վոր բարձրացել էին յեղեմյնիներով
լեռնակը:


Հենց վոր վաշտը մարտական կարգով դուրս յեկավ անտառից,
տանկերի դասակը նրա ձախ թևից յետևից նրա առաջև անցավ և ուղղվեց
նույն տեղ (նկ. 18):

Մոտենալով լեռնակին մոտ 250 մետրի վրա, տանկերը գնդացրա-
յին կրակ բացեցին հետևակի մասն խմբակների վրա, վորոնք արդեն
շարժվում էին վաշտի դիմաց լեռնակի լանջերից: Այդ խմբակներն ա-
րագ ցրել ու ցան արվին տանկերի կրակով: Տանկերն արդեն հասան բար-
ձունքի կատարը: Կատարի հետևը տանկերը դրոհեցին հետևակի մոտ կես
վաշտ մի հրանոթի հետ միասին: Հրանոթին չհաջողվեց կրակ բացել՝
տանկերն իրենց կրակով նրան իսկույն լսեցրին: Դրանից հետո տանկերը
ցրեցին հետևակին (հարց 6, նայիր յերես 42): Մեր հերտալորները
ձեռքերով գլորեցին հրանոթը կատարի վրա: Գնդացիներն արդեն այն-
տեղ էին և գնդակոծում էին հակառակորդի հետևակին:

2-րդ վաշտն առաջավոր ջոկերի հետ դուրս յեկավ լեռնակի վրա,
բայց գետի կողմից յենթարկվեց թեմային կրակի: Հետևակը պառկեց...
Այդ գնդացիներին հետ տանկերն արդեն վոչինչ անել չէին կարող: Պետք
էր սպասել հրետանու աջակցութեան: Տանկերը քաշվեցին ծածկույթի
հետևը...

Մարտից հետո դասակի հրամատարը պատմեց մարտիկներին իր
տպավորութիւնները՝ «Ափսոս, վոր տանկերը չկարողացան հակառա-
կորդին հեռու խուկել—գետը խանդարեց: Հակառակորդը բաց տեղով էր
գնում, լքվ էր յերևում: Խրամատներ չկան, հակառակորդի քողարկումը

վատ է: Տանկերը հեշտությամբ նկատեցին գնդացիները դժվար երթագնվել նրանցից»:



Նկ. 18 Տանկային դասակը ողնում և հրաձիգ վաշտին հակադրոհի ժամանակ


Իրոք տանկերը չկորցրին և վուչ մի մեքենա: Թեպետ և վայրը բաց եր, բայց հառակալորդի հրետանին չեւ կրակում, յերեւի իր հետեակին հարվածելու յերկյուղից: Բացի այդ հակառակորդը քայքայվել եր, ինչպես այդ հաճախ լինում է արագ ձեղքումների ժամանակ գետանցից հետո: Տանկերի վճռական գործողությունների չնորհիվ հաջողվեց հաղառակորդին յետ շարտել գետի մյուս կողմը:

Տանկերը կարող են դործադրվել վուչ միայն պաշտպանության մեջ: Նրանք կարող են դործադրվել նաև մարտից դուրս գալու դեպքում: Մարտից դուրս յեկող կողմը, ամենից առաջ ձգտում և, վորքան կարելի յե, շուտ կտրվել հակառակորդից և վորքան կարելի յե, շուտ պահպանել իր կենդանի ուժը, այսինքն՝ հետեակին: Դրա համար հարձակվող և հետապնդող հակառակորդի դեմ վերջապահում, վորքան կարելի յե, քիչ հետեակ և մեծ չափով հրետանի, գնդացիք և մանավանդ զրահա-

պատ ուժ է տրվում: Զրահավոր ուժերը—զրահմեքենաներ և տանկերը, չնորհիվ իրենց շարժունություն, զրահին և կրակային միջոցներին, իսկ տանկերը, չնորհիվ նաև ամեն տեղով շարժվելու ընդունակություն, կարող են շատ առաջ ուղարկվել ծածկությունների յետևից և ստիպել հետապնդող հակառակորդին հետ քաշել կամ կանգ առնել: Դա հնարավորություն է տալիս գնդացիներին, հրետանուն և հետեակի փոքր զորամասերին հետ քաշվել և տեղավորվել նոր բնագծում:

ՏԱՆԿԵՐԻ ՄԱՐՏԸ ՏԱՆԿԵՐԻ ԴՆՄ

Ավելի մեծ նշանակություն ունի տանկերի մարտը տանկերի դեմ: Տանկերի համար լավ կործանիչը հանդիսանում է զրահապատ ինքնաշարժ, արագաձիգ հրանոթը, այսինքն՝ իրականում, նույն տանկը: Այդպիսի տանկը, հանդիպելով միայն գնդացրային տանկի հետ, հեշտությամբ կարող է նրա հետ հաշիվ տեսնել: Ներկայումս արատասմաթյամբ տանկերի դեմ մարտնչելու համար կառուցվում են հատուկ կործանիչ տանկեր (նկ. 19) և զրահապատ արակտորային հրանոթներ (նկ. 20 և 21):




Նկ. 19 Պակեզի տանկերի կործանիչը

Իմպերիալիստական պատերազմի ժամանակ գերմանացիները քիչ տանկեր ունեյին, սակայն դեռ այն ժամանակ տանկերը տանկերի դեմ մարտնչելու մի քանի դեպքեր տեղի ունեցան (հարց 7, նայիր յերես 43): Ապագա պատերազմում տանկային մարտերն անկասկած շատ հաճախ են լինելու: Տանկային մարտի յեղքը կախված է վուչ միայն նրանից թե վորքան և ինչպիսի տանկեր կունենա այս կամ այն մարտում հետեակը և հրետանին, ոգնելով իրենց տանկերով կործանելու հակառակորդի տանկերը, միաժամանակ կռիվ մղելով նրա հետեակի և հրետանու հետ:

5. Ի՞նչպիսի գետն է անհաղթելի քեքև տանկերի համար: Թեքև Ռեմո տանկի համար 70 սանտիմետր խորությամբ գետը, 45 աստիճանից ավելի ուղղորդություն ունեցող ափերով,

տղմոտ հունով և հետևակի համար անանցանելի ճահճոտ ավերով :

Այդ հատկություններից ամեն մեկը գետն անանցանելի յե դարձնում տանկի համար : Ահա քե ինչու հակառակորդն այն ժամանակ միայն կանգնեց, յերբ անցավ գետի մյուս կողմը, վորովհետև գետը հասեցրեց տանկերի ընթացքը :



Նկ. 20 Ինքնաշարժ 82 միլիմետրանոց թնդանոթ

6. Ի՞նչու տանկերը մալս հրանոթը գրոհեցին :


Հրանոթը տանկի գլխավոր քշմամին է հանդիսանում : Դրա համար ել տանկերը շարունակ աշխատում են վռնակներով հակա-տանկային հրանոթը, իսկ հետո արդեն անցնում են հակառակորդի հետևակին և գնդացրերին : Ահա քե ինչու հետևակը ժամանա-կավորապես կարող է և առանց տանկերի մնալ :

Դրա համար լավ կլինեք, յեք-է հետևակը և հրետանին այդ-պիսի հրանոթի հետ հաշիվ տեսնեյին, իսկ տանկերը գնդացիր-ների հետ :

7. Ի՞նչպես են տանկերը մարտնչում իրար դեմ :


Գնդացրային քեք-է տանկը ծանրի հետ բաղխվելու դեպքում, քեք-է տանկը պետք է ոգտագործի իր արագաշարժությունը, Հնարավորություն ստեղծելով իր ծանր տանկերին մարտնչելու հակառակորդի տանկերի դեմ : Միայն ծայրահեղ դեպքում է քեք-է գնդացրային տանկը կռվի բռնվում ծանրերի հետ, ուղղելով իր կրակը ծանր տանկի դիտողական անցքերի վրա : Թեք-է տանկը

այդ մարտում մի առավելություն ունի—դա նրա փոքր ծավալն է և արագաշարժությունը :



Նկ. 21 Հակատանկային թնդանոթ (տանկում են կարգեն-լոյտի տանկետով)

Ավելի լավ է, յեթե տանկերի բաղխման ժամանակ կարելի յե յերկու տանկերի կրակն ուղղել հակառակորդի մի խանկի վրա, այդ դեպ-քում մինչևիսկ 2 թեթև տանկը հաջողությամբ կարող են մարտըն-չել մի թեթև կամ միջակ տանկի դեմ : Այն տանկը, վորն սպառա-ղինված է միայն գնդացրերով, մեծ մասամբ յենթակա յե կոր-ծանման յեթե հանդիպում է թնդանոթներով սպառաղինված մեծ տանկերին (Նկ. 22) :



Նկ. 22 Ծանր տանկը հաշիվ է տեսնում փոքրի հետ

Անտառային շերտը, ուր, հակառակորդը հետ քաշվելիս, տեղի ունեցան մարտական գործողություններ, հարուստ իր դետալներով և ճահիճներով: Մեր հարձակվող զորամասերը դժվարություններ կոխվեցին: Այդ մարտերի ծանրությունը դրեթե ամբողջովին ընկավ հետևակի և սապյորական զորամասերի վրա, վերջինս տանկերը չէին կարող գործել, իսկ հրետանին անջատված էր հետևակից և վատ էր պիտու: Հակառակորդը համառորեն կասեցնում էր մեր հարձակումը, պոչտպանությամբ համար բարենպաստ անտառային շրջանում: Նա սկսեց հետ քաշվել միայն այն ժամանակ, յերբ մյուս տեղամասում տեղի ունեցավ մեր խռչոր հաջողությունը:

Մի քանի օրից հետո մեր վաշտն անտառային շերտից դուրս յեկավ բաց չոր բլուրների վրա: Հրամայված էր առանց ուշանալու ծախվել հաջողությունը: Նորից մեկ կցեցին մեծ քանակությամբ հրետանի և տանկեր: Տանկերի մի մասն առանձնացվեց և կազմվեց մի հետևակին աջակցող մի խմբակ, նրան ուղեկցելու համար, իսկ տանկերի մի ամբողջ դումարտակ նշանակվեց «հեռավոր գործողության» համար—նրան խնդիր տվեցին—վաճառել հակառակորդի մարտկոցները և ավերել նրա մոտադա թիկունքը՝ կապն ու սնունդը խախտելու համար:

Ահա թե ինչ էր պատմում այդ մասին տանկային վաշտի հրամատարը, վերջ մասնակցել էր հակառակորդի թիկունքը և հրետանին ավերող տանկային խմբակում, կամ ինչպես անվանում են «հեռավոր գործողության» շարանում:

«Գրոհի նախորդակին մենք ստացանք հակառակորդի տեղավորություն և նրանում մարտկոցների դասավորությունը ողալուստիսման»:

Ինչքան լավ ուսումնասիրեցինք վաշտը քարտեզով, այդ ողալուստսիսմայով դիտակետերից կատարած վաշտի անմիջական հետախույզության միջոցով: Տանկերի համար մենք գտանք լավ յերման դիրքեր, վեր ծածկված են հակառակորդից թե ողից և թե դեմից: Իմ վաշտը շարժվում էր գլխից, մնացածները շարժվում էին հետևակի աջից և ձախից սանդղաձև: Իմ վաշտը պետք է վաճառեցինք № 3 և № 2 մարտկոցը և այնուհետև գործեր այնտեղ, վերադառնալ յերևան կգար նախապես չհայտնաբերված մարտկոցը, կամ թե 2-րդ և 3-րդ վաշտերի գործողություններն անհաջող լինելու դեպքում (նկ. 23): Վաճառեցինք մարտկոցը, մենք պետք է անցնեցինք կապույտ անտառի շուրջը նկարեցինք հակառակորդի թիկունքն այդ անտառի հետևում, վերադառնալ մեր ունեցած տեղկություններով դանդաղեցինք գումակները և հրետանային շարքերը: Վերջապես մեր խնդրի մեջ էր մտնում վաճառեցինք թե ճակատից հետ քաշվող զոր-


* Մանով. ողալուստիսման այն սխեման է, վեր կաշված և սովորականից նկատած լուսանկարի հիման վրա:

բամասերը և թե թիկունքից մոտեցող ուժերը: Հավաքի կայանը նշանակված էր «կապույտ անտառում»:

Ժամը 4-ին բոլորս գտնվում էինք մեր մեքենաների մեջ՝ առաջ շարժվելու համար լիակատար պատրաստությամբ: Դուրս գալու համար սպասում էինք սպանաչանի:

Հրետանին կոխվեց մեր մեքենաների անցումը էլին մեր գլխի վրայով: Թիկունքի թնդանդթային արկերի սույոցը և հրեցային արկերի խշխշոցըն իրար էլին խառնվում:

Ժամը 4-ից 15 րոպե անց յես սպանաչան ընդունեցի «առաջ» և անհապաղ տվեցի այն իմ դասակների հրատառարներին, իսկ յես իմ տանկով առաջ գնացի:



Նկ. 23 Տանկային վաշտի գործողությունների պարագան «հեռավոր գործողության» խմբակի մեջ

Դեռ յերեկ նշած կատարի ուղղութեամբ արագորեն դուրս գալով, յետ տեսա, վոր մեր հրետանու արկերը պայթում են յերկու կետում— ծառով բարձունքի վրա և 100,5 բարձունքի վրա:

Պայմանավորված եր, վոր մենք կգնանք այդ բարձունքների միջով ձագարներից ազատ շերտով: Յետ ուղղեցի տանկը դեպի այդ միջանցը, գնալով ամենամեծ արագութեամբ: Մենք շտապ անցանք մեր հետևակի տեղավորութիւնը և հասանք լարափակոցին: Միքանի արկեր պայթեցին իմ տանկից մոտիկ տեղում: Սակայն մենք անփորձ անցանք լարափակոցը: Արկերի պայթումները տեղափոխեցին կատարի հետևը: Հակառակորդի հետ անցանկալի ընդհարումից խուսափելու համար, մենք առաջ ելինք գնում արագ կերպով: Յետ տեսա մի գնդացի, վոր կրակում էր մեզ վրա: Հանդես յեկավ գումարտակային թնդանոթը: Կողքից գնացող յերկրորդ դասակի տանկը լիակատար ընթացքի ժամանակ գնդացիային կրակով վռնաչցրեց նրա սպասավորներին:

Ահա իմ տանկը, թողնելով առաջին խրամատները, թեքվեց կատարի հետևը: Խրմում եր խրամատի մեջ, բայց դառ ավելացնելով հաղթահարում եմ խոչընդոտը և նորից առաջ եմ շարժվում, անցնելով ինձնից առաջ անցած 1-ին և 2-րդ դասակներից:

Առջևում անտառներ եմ նկատում: Նրանց միջև յեղած արանքում և նրանց հետևում ծանր արկերի պայթյուններ են յերևում: Ձիգերի փայլ եմ տեսնում: Դա № 3-րդ մարտկոցն է, վոր կրակ է բացել իմ վաշտի վրա: Ազդանշան եմ տալիս «Հետևել ինձ, դուհեկ մարտկոցը»: 2-րդ և 3-րդ տանկային վաշտերը շարժվում են հետևից և կողքերից 400 մետրի վրա: Տեսնում եմ, վոր մեր առջևում արկերի պայթյունները սակավանում են: Մեր հրետանին հակառակորդի մարտկոցը մեզ թողնելով, ամբողջ կրակը փոխադրեց հրաձգային նպատակների վրա:

Առջևում արկերն պայթում են, տեսողութիւնը ծածկելով ծխով և հողի ոյունով:

Յետ առաջին դասակի հետ գնում եմ մարտկոցի ճակատի դեմ, II-ը գնում է դեպի ձախ, III-դը դեպի աջ թեւը: Մենք բաց ենք անում զորեղ կրակ:


Յետ տեսնում եմ թե ինչպես 1-ին դասակի տանկերից մեկը կանգ է առնում—նրա թրթուռը ջարդված է: Նա չարունակում է կրակել: Յետ տեսնում եմ, թե ինչպես նրա արկը դիպավ մարտկոցի հրանոթներից մեկին:

Մենք հասնում ենք դիրքերին... մարդիկ փախչում են (նկ. 24): Մենք արդեն մարտկոցի տեղն ենք... Յերկրորդ դասակից տանկի հրամատարը վայր է թռչում տանկից և հերթով շտապ հանում է յերկու հրանոթի փականները: Նա վերցնում է նրանցից իր հետ տանկի մեջ (նկ. 25):



Նկ. 24 Մարդիկ փախչում են մարտկոցի մոտից

Մեր հրետանու արկերը բավականին փոքրիկներից վայրը: Տանկերն ամբողջ ժամանակ խուսափում են ծանր արկերի ծագարներից: Սակայն չուտով մենք դուրս ենք գալիս ավելի հարթ տարածութեան վրա և ամբողջ թափով առաջ ենք գնում: Դիտում եմ, թե ինչ են անում մյուս վաշտերը: Նրանք արդեն կովի բռնվեցին հակառակորդի մյուս մարտկոցների հետ: Յետ վորոշում եմ գնալ ողնութեան յերկրորդ վաշտին: Գնում եմ ուղիղ, հետո թեքվում եմ աջ և մտնում եմ 2-րդ տանկային վաշտի հետ մարտնչող մարտկոցի թիկունքը:



Նկ. 25 Տանկի հրամատարը շտապ հանեց հրանոթի փականը

Կրակող մարտկոցի թիկունքի վրա գնդացրային կրակ ենք բացում... մարդիկ ընկնում են վերավորված և սպանված: Հրանոթներից մեկը կա-
րողացավ դառնալ դեպի իմ վաշտը, բայց յես նրա վրա յեմ տալիս թըն-
դանոթի կրակով: Յես աղվանչան եմ տալիս՝ «Արա, ինչ վոր յես»: Վաշ-
տը հետ եմ դարձնում, գնում եմ № 2-րդ մարտկոցի վրա, բայց ընկնում
եմ հրետանային կապույտ անտառի ծայրից ուղղված կրակի տակ: Դա-
ռողություններով չհայտարարված մարտկոցն է: Անհապաղ մտնում եմ
փոքրիկ հեղեղատի մեջ—դա ծածկում է ինձ մարտկոցի ձեռքերից: Յես
կանգնեցնում եմ տանկը, ձախից լավում են առանձին դանդաղ ձեռքեր—
դա կամ 4-րդ կամ 5-րդ մարտկոցն է: Շտապ նայում եմ քարտեզին:
Վորոշում եմ գնալ կապույտ անտառի հետևը, մարտկոցի թիկունքն անց-
նելով անտառի ծայրից: Գնում ենք Սեվերենովկա գյուղի վրա, գնում
ենք թիկունքների վրա, վառահեղ լինելով, վոր մյուս վաշտերն ել են կա-
ռարել իրենց խնդիրները: Հեղեղատի միջով շտապ անցնում ենք կապույտ
անտառի յետևը և թփուտներով պատասխարվելով, ուղղվում ենք դեպի
Սեվերենովկա: Հեղեղատի վերջում, թփուտներին մեջ հանդիպում ենք
փամփուշտների սայլակներին: Գնդացրային կրակով խփում ենք և մարդ-
կանցը և ձիերին: Կարում ենք Սեվերենովկա տանող ճանապարհը և ներս
ենք խուժում գյուղի մեջ թիկունքի կողմից: Կրակ ենք բացում գնդացրով
և թնդանոթներով: Արագությունը սլանում հեռանում և ավտոմոբիլը,
հավանորեն չտարինն է: Արագ անցնում են միջանի ձիեր: Տանկերից
մոտիկ պայթում են ձևերի միջանի նստակներ, բայց անհետանք: Գյու-
ղից դուրս ենք դալիս, ճանապարհով թեքվում ենք աջ, հանդիպում ենք
ճանապարհով շտապ անցնող հետևակ վաշտին: Միջանի ընդերքից հետո
ճանապարհի վրա և նրա մոտ տեսնում ենք տանյակ սպանվածներ և վի-
րավորներ, ջարդված սայլեր և գնդացիրներ...

Վաշտը, վորպես մարտական միավորում դադարեց գոյություն ու-
նենալուց: Հետո յես նորից շուտ տվեցի դեպի հյուսիս և դուրս յիկա
ճանապարհի վրա, վորտեղ թփուտներում տանկերին կանգնեցրի, վոր-
պեսզի դիտեմ և կողմնորոշեմ: Առջևում ընկած էր տանկերի համար
անանցանելի մեծ և խիտ անտառ... Յես վորոշեցի հնարավորություն
տալ մարդկանց մի քիչ հանգստանալու, լյուկերը բացելու և թարմ ու-
ղնչելու: Վաշտում 2 տանկ սրահանում էր, բացի դրանից փաշեյլ էր
տանկերից մեկի գնդացիրը: Յես վորոշեցի մինչև մնացած վաշտերի
մոտենալն սպասել այստեղ և դրա հետ միաժամանակ գրավել մեծ ան-
տառի յեղքերը:

Շուտով արևելքից և հարավից մենք մոտորների աղմուկ լսեցինք—
դա մոտենում էին մեր 2-րդ տանկային վաշտերը: Մենք բոլորս հետ
քաշվեցինք հավաքման կայանը:

Այդպես կանոնեց իր խնդիրը «հեռավոր դործողություն» տանկերի
խմբակը, այսինքն տանկերի գումարտակը, վոր ուղարկված էր հակառա-
կորդի հրետանու դեմ և նրա թիկունքում դործելու համար:

Այստեղ հաջողությամբ դործել են թիկն տանկերը, բայց այդ խոն-
դիրը նրանք չէին կատարի, յիթե դործելին ուժեղ ամրացրած չերտի
դեմ: Այդտեղ թեթև տանկերը չէին կարող անցնել լայն խրամատներով,
խրամուղիներով և մի շարք խոչընդոտներով: Նրանց փոխարեն պետք
կգային ծանր տանկերը, բայց մոչ դանդաղաբարձերը, ինչպես Ն՝ մարկա
ուենցոյը (նկ. 3), այլ արողաշարժերը ինչպես սրինակ Վիկկերս ծանր
տանկերն են (նկ. 5): Նման տանկերը մոչ միայն արողութամբ կանց-
նելին խոչընդոտները, այլև կարող կլինեյին ճնշել մարտկոցներն իրենց
ամրացրած դիրքերում:

Ի դեպ խմբակի խառնակ և պատերազմում անդիմացիները հենց այդ-
պիսի հարձակումներ էին դործում հակառակորդի մարտկոցների և թի-
կունքի վրա, անգամ այն ժամանակվա իրենց ունեցած դանդաղաբարձ
տանկերի ոգնությունով, վորոնց ամենամեծ արագությունն է մինչև 6—8
կիլոմետր մեկ ժամում: Հակառակորդի թիկունքում տանկերի հարձա-
կումների մասին դեպքեր են հայտնի նաև քաղաքացիական պատերազմի
ժամանակից: Այդպիսի խոցերը դործադրվում էին և վրանդելովիներին
կողմից: Բայց նրանք տանկեր քիչ ունեյին և թիկունքում նրանց դործո-
ղությունները չէին ուղեկցվում ճակատի դիրքերի վճռական հարձա-
կումով: Դրա համար նման հարձակումներն անհանգստացնում էին և
վնաս էին հասցնում, բայց մարտի յեղքի վրա չէին աղղում: Պատմու-
թյունը դեպքեր գիտե, ճիշտ է, յեղակի դեպքեր, յերբ տանկերը նաև
դիչերներն են ներս խուժել հակառակորդի թիկունքը: Քանի վոր այդ-
պիսի դեպքեր արդեն չկան, կնշանակի նրանց առկա կունենան և հե-
տագայում: Բայց պիտի տեսչ, վոր թե տանկերի և թե դրահամեքենաների
համար դիչերային դործողությունները դժվար են: Դրա համար դիչե-
րային դործողություններից առաջ պետք է նախապես հանգամանորեն
պատրաստել մեքենաները, անձնական կազմը և ուսումնասիրել վայրե-
րը: Անդիմացիներին դիչերային այդպիսի ներս խուժումներ կատարելը
հաջողվում էր, բայց մոչ թե հակառակորդի դիրքերին հարված հասցնե-
լու կամ նրա վորեկե կառուցվածքներն ավերելու նպատակով, այլ խորը
հետախույզության նպատակով: Այժմ այդպիսի հետախույզական վորո-
նումներն արագորեն տանկերով ել ավերի հավանական են:

Նրանց ոգնությունով կարելի չէ վորոշել, թե դիչերը հակառակորդն
ինչ է նախապատրաստում:

Վերջապես պետք է ուշադրություն դարձնել հետևյալի վրա—վորքան
ել տանկերը լավ դործեն հակառակորդի թիկունքում, վորքան ել մարա-
կոցներ, պարկեր և շտաբներ մոչնչացնեն, բայց յիթե դիրքերը (հետևա-

կը և հրետանին) վոչինչ չեն անում, չեն հարձակվում, այլ սպասում են վոր հակառակորդը տանկերից վախենալով ինքը հեռանա, ապա յերբեք հաղթութիւն ձեռք չի բերվի: Վորքան եւ հակառակորդի թիկունքում տանկերի հարձակումից կորուստը և վնասը մեծ լինի, նա միշտ կարող է, յեթե միայն չամբարցնի հետեակի հաջողութիւնները, վոչ միայն դիմադրել, այլ և արագութեամբ նոր մարտկոցներ և նոր ուժեր բերելով՝ վոչնչացնել տանկերը:

ՏԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵԾԵԼԱԶՈՐԻ ՀԵՏ ՄԻԱՏԵՂ

Տանկերի վրա խնդրներ ե դրվում, վոչ միայն ունել հետեակին՝ մարտնչելու հրետանու դեմ, այլ և դործելու հեծելազորի հետ միատեղ, վորը բաժանաւ արագ ե շարժվում, քան հետեակը և դրա շնորհիւ իվի-ճակի յե կատարել այնպիսի խնդիրներ յինչպիսիք են թեի արագ շրջանա-ցումը, հակառակորդի թիկունքի ասպատակումը, ճեղքումների զարգա-ցումը և այլն: Սակայն հետեակն այժմ դժվար ե կատարում այդ խնդիր-ները, քան առաջ՝ վոչ միայն ճակատը, այլ և թիկունքները հագեցված են լինում կրակային և կովի այլ տեխնիկական միջոցներով: Դրա համար նրանց անհրաժեշտ ե ուժեղացնել նաև հեծելազորը, բայց այնպես, վոր դրանով չնվազի նրա շարժունութիւնը: Այդպիսի տեխնիկական միջոց-ներից մեկն ել հենց հանդիսանում ե արագընթաց տանկը:

Հեծելազորի մարտական կանոնադիրքն ասում ե, վոր ժամանակակից արագընթաց տանկերը կարելի յե դործադրել հեծյալ զորամասերի հետ միատեղ կատարելիք դործողութիւններում և հանկարծակի ու շտապ կրակային հարվածներ հասցնելու համար, հեծելազորի դործողութիւն-ների կազակցութեամբ՝ հակառակորդի թեւում կամ մոտապա թիկուն-քում:

Զրահապատ ավտոմոբիլներն ել են ուշխատում հեծելազորի հետ, բայց նրանք, վորպես կանոն, դործում են ճանապարհների վրա և կցվում են հեծելական զորամասերի փոքրիկ ստորաբաժանումներին, զյլապէրա-պես հետախուզութեան ե պահպանութեան մեջ դործելու համար:

Իսկ տանկերը չի կարելի փոշխացնել հեծելական զորամասերի առան-ձին ստորաբաժանումների միջև: Նրանց, վորպես հարվածող բոսնցք, ա-վելի լավ ե ոգտագործել այնտեղ, վորտեղ պետք ե հակառակորդին վճա-կան հարված հասցնել և այնտեղ, վորտեղ հետեակին մենակ դժվար ե կամ անհնարին ե հաշիվ տեսնել հակառակորդի հետ:

Հետեաբար, յեթե զրահապատ ավտոմոբիլները մշտապես առաջից են գնում և մասնակցում են հետախուզութեան մեջ, ապա տանկերը, վորպես կանոն, ոգտագործվում են վորպես հեծելազորի շարժական ուժանդակ և

դործի յեն դրվում այն ժամանակ, յերբ հեծելազորը կվերջացնի հետա-խուզութիւնը, կարողի հակառակորդի դասավորութիւնը և նրա հետ կովի կրճնվի:

Ինչպիսի տանկն ե պիտանի հեծելազորի հետ միատեղ դործելու համար: Դա կախված ե վայրից, նրանից, թե ինչպիսի դետային պատ-նեններ կան և ինչպիսի կամուրջներ նրանց վրայով: Վոչ ամեն կամուրջ կարող ե դիմանալ ցանկացած դ տանկի ծանրութեան տակ: Սակայն թիւ կամուրջներ՝ մեծ փոսի և դյուզական ճանապարհների վրա, կարող են դիմանալ 12 տոննանոց Վիկկերս տանկի ծանրութեանը, իսկ շատ կա-մուրջներ չեն դիմանա և 6 տոննանոց թեթե տանկին: Բայց բոլոր կա-մուրջներն ադատորեն դիմանում են տանկետաներին: Հեծելազորն արագ ե շարժվում, հաճախ առանց ճանապարհի. նա սպասելու ժամանակ չու-նի, մինչև վոր բոլոր տանկերը ամեն մի կամուրջի շուրջն անցնեն:

Ահա թե ինչու հեծելազորի ուղեկցման ամենալավ տանկն կամ թեթե տանկը, կամ տանկետանն ե:

Սակայն տանկետանն ներկա պայմաններում ավելի շուտ հետախու-զութեան միջոց ե հանդիսանում: Ուստի հեծելազորի համար վորպես իսկական զրահապատ հարվածային միջոցը կհանդիսանա արագընթաց թեթե տանկը: Ապագայում, յերբ տանկետան կատարելագործված կլի-նի, նա անկասկած վորոչ դեպքերում կարող ե փոխարինել թեթե տանկին և հեծելազորի կողմից՝ կոգտագործվի վորպես կրակային հարվածի միջոց:

ՏԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՈՏՈՐԱՑՎԱԾ ԹԵՎ ՄՈՏՈՐՈՒ-ՄԵԲԵՆԱՅԱՑՎԱԾ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ:

Մեքենայացված միավորում կոչվում ե այն միավորումը, վորը մո-տավորութիւնը, արակտորը կամ մոտոցիկլը ծառայում ե վորպես տեղա-շարժման անբաժանելի միջոց: Որինակ, յեթե հրաձիգ դուռը շարժ-վում ե վոչ թե վոտքով, այլ նրանց ամրացրած ավտոմոբիլներով, ապա նա մոտորացված դուռը ե հանդիսանում: Այդպիսով մոտորացված դո-րամաը շարժվում ե լավ ճանապարհներով ավելի արագ, քան ամեն մի հետեակ և մինչևիսկ հեծյալ զորամաս:

Մեքենայացված միավորում կոչվում ե այն միավորումը, վորը մո-տորն ոգտագործում ե վոչ միայն շարժման համար, այլ և մարտի հա-մար, այսինքն նա բաղկացած ե տանկետաններից, զրահապատ ավտոմո-բիլներից, տանկերից և ինքնաշարժ հրետանուց: Այդպիսի միավորումն բնորոշակ ե վոչ միայն արագ շարժվելու, այլև դորեղ հարվածներ հասց-նելու հակառակորդին:

Այժմ բոլոր կապիտալիստական բանակները կազմակերպում են իրենց

Համար մոտորացված և մեքենայացված գործամասեր, իսկ վոմանք մինչև իսկ առաջարկում են ամբողջովին մեքենայացնել վողջ բանակը: Նրանց նպատակն այն է՝ ստեղծել փոքր, բայց շարժուն և հզոր բանակ, յով վարժեցված և բուրժուապիտային անձնակեր մարզկային կազմով: Այդ խնդրում նրանք մի բան մոռանում են, Վոր ճակատում մեքենայի մեջ նստած ամեն մի մարտիկին թիկունքում հարկավոր է, նրանց մասնագետների հաշվով, 30 բանվոր, այդ մեքենաները կառուցելու, նորոգելու և մատակարարելու համար: Իսկ դա նշանակում է, Վոր նրանց հավատարիմ 300 հազար մարտիկների գլխաց, Վորոնք գուցե և կծարվեն, թիկունքում հարկավոր և 9 միլիոն բանվորներ, Վորոնք իհարկե կապիտալիստների շահերը չեն պաշտպանելու:

Մոտորացված ջոկատները գործադրվում էին դեռ 1911 թ. խալացիների կողմից Տրիպոլում Թյուրքիայի դեմ: Գործադրվում էին նրանք նաև իմպերիալիստական պատերազմում:

Մոտորացված ջոկատների գործողությունն ավելի վաղուց սրինակը մենք ունենք քաղաքապետական կոմիտե:

1920 թ. Կովկ. քաղաքում 12-րդ Կարմիր բանակի խոչընդոտյն հանգույցն էր և մարտամիջերների պահեստների կենտրոնացման վայրը: Սպիտակ լեհերը հեռակալին նստեցրին ավտոմոբիլների մեջ, թնդանոթները կապեցին ավտոմոբիլներին, Վերցրին դրահապատները և խճուղով գնացին դեպի Կովկ. 12-րդ բանակի աջ թևի շուրջն անցնելու համար: Կարմիր հրամաժայտությունը չէր սղատում, Վոր Կովկ. վրա հարձակում տեղի կունենա և խճուղին դիտելու համար հատուկ միջոցներ ձեռք չեն առել: Լեհական ավտոմոբիլային ջոկատն անցնելով մի որ ու գիշերում մոտ 140 կիլոմետր գրեթե ստանց վրձնադրությունը գրավեց Կովկ.: Զոկատի հետևից հետևակն էր դնում ճակատից:

Կովկ. դրավումն անդրադարձավ սպիտակ լեհերի դեմ մղվելիք գործողությունների ամբողջ ընթացքի վրա: Այդ մարտում լեհերի կողմից գործում էր մեքենաներով փոխադրված մոտորացված հետևակը և մեքենայացված գործամասը—դրահապատները: Այդպիսի միավորումը կոչվում է մոտո-մեքենայացված միավորում: Այդ միավորումը դրահապատ ավտոմոբիլների փոխարեն կարելի չէ տանկեր կցել:

Ի՞նչպես են արդյոք գործելու տանկերը մոտոմեքենայացված միավորումների կազմում: Այդ հարցին պատասխանելու համար նախ պետք է իմանալ թե ինչից է բաղկացած այդ գործամասը: Դրա մեջ կան միքանի խմբակներ.—

Հետախուզական խմբակ: Բաղկացած է թեթև դրահապատ ավտոմոբիլներից, գնդացրերով զինված, դրահապատներից, տանկետակներից, տոանձին հրանոթներից և բեռնակիր ավտոմոբիլների վրա տեղավորված

մանր հրաձիգ և դնդացրային մոտորաբաժանումներից: Նրա խնդիրն է՝ կատարել հակառակորդի հետախուզությունը, գտնել նրա թևերը, խորը թախանցել նրա մարտակարգի մեջ և մինչև իսկ, յեթե պետք է, կասեցնել նրա հարձակումը:

2. Ավտոհրաձիգ խմբակ: Դա ամենից առաջ հետևակ է, բեռնակիր ավտոմոբիլների վրա նստեցրած, Վորն ունի մեքենաներով փոխադրվող իր հրետանին, իր սապյորները, հետախուզություն չունեցող կապի միջոցները: Ղրանում ամեն ինչ մոտորացված է, այսինքն շարժվում է ավտոմոբիլների վրա: Այդ խմբակի խնդիրն է—կաշկանդել հակառակորդին, ընդ վորում, հետևակը մարտ մղելու համար պետք է վայր իջնի մեքենաներից, ինպես ասում են «հետիոտն դառնալ»:

3. Հրետանային խմբակ, Վորը կազմում են միքանի ինքնաշարժ կամ ավտոմոբիլների վրա բեռնած հրետանային մարտկոցները:

4. Տանկային խմբակ, Վորը կազմում է թեթև կամ միջակ արագընթաց տանկերից: Ղրա խնդիրն է ջախջախիչ հարվածներ հասցնել հակառակորդին: Շատ դեպքերում այդպիսի միավորումն ունի նաև հետախուզական ու շտուրմի սեփական ավիա-ջոկատներ:

Այդպիսի մոտո-մեքենայացված գործամասը կարող է՝ 1) անցնել որ ու գիշերը մինչև 120—150 կիլոմետր, 2) շարժվել արագ, հայտնաբերվել անակնկալ կերպով և 3) հակառակորդին հզոր և խորը հարվածներ հասցնել տանկերի առկայությունը չնորհիվ: Սակայն այդպիսի միավորումն իվիճակի չէ յերկար պաշտպանվել, Վորովհետև նրա հետևակը քիչ է: Դա ընդունակ չէ ուժեղ ամրացրած շերտերը ձեղքելու և յերկարատև համառ հարձակում կատարելու: Ուստի դա ոգտադրվում է ազատ դորաշարժերի համար, այսինքն հակառակորդի թևի շուրջն անցնելու և նրա դորասյուններին հանկարծակի հարված հասցնելու, հակառակորդին հետապնդելուն և հեծյալ գործամասերի հետ գործակցելու համար: Գիշերը խիստ դժվար է գործադրվում այդ միավորումը:

Մոտո-մեքենայացված գործամասերի հիմքը կազմում են տանկերը: առանց դրանց նա ընդունակ չէր լինի զորեղ հարված հասցնելու: Հարձակման հաջողությունը կախված է վոչ միայն արագ շարժումից, այլև գլխավորապես վայրեց—յեթե վայրը բաց է, ապա դժվար է պաշտպանվել արագընթաց տանկերի դեմ: Իսկ յեթե վայրը հարուստ է անտառներով, ծառատաններով, բնակավայրերով, թփուտներով և բարձր հացաբույսերով, ուր կարելի չէ ծածկվել, ապա այստեղ տանկերի դեմ պաշտպանություն կազմակերպելը հեշտ է:

Մոտո-մեքենայացված գործամասերի մեջ մեծ դեր են խաղում տանկետակները: Դրանք ոժտված են շարժման մեծ արագությամբ, քիչ

նկատելի չեն և դրա համար ելի վիճակի չեն խորը հետախուզելու հակա-
ռակորդին:

Իրենց ամենուրեք չարժվել կարողանալու շնորհիվ, տանկետկաները
կարող են հեշտութամբ, առանց ճանապարհի, անցնել հակառակորդի
գործադան թիկունքը և, հանկարծակի գնդակոծելով նրան գնդացրային
կրակով, նույնպես արագ անհայտանալ:

Մենք տեսնում ենք, վոր տանկերը գտնում են իրենց ամենալայն
դորձադուրթյունը—հետեակի հետ նեղ դորձակցությունից մինչև ինք-
նուրույն մարտական աշխատանքը: Այժմ կարելի չէ ասել, վոր տանկերը
կարող են մասնակցել համարյա բոլոր պայմաններում և ամեն տեսակի
մարտերում: Տանկը բոլոր լուրջ մարտական դորձողությունների ավելի
հաճախակի և անհրաժեշտ ուղեկիցն է:

ՄԵՐ ՅԵՐԿԻՐ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՅԱՆ ՀԱՁՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՅԼ ԵՆ ՏԱԼԻՍ ՄԵՋ ՈՒԺԷ-
ՂԱՑՆԵԼ ՏԱՆԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ:

ՈՐԵՑ ՈՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՀԱՐՍԱՆՈՒՄ Ե ՏԵԽՆԻԿԱՅՈՎ:
ՄԱՐՏԻԿԸ ՊԵՏՔ Ե ՏԻՐԱՊԵՏԻ ԱՅՂ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ:

Տ Ո Ւ Ր Տ Ա Ն Կ

ՈՒՍԱԻՄՆԱՍԻՐԻՐ

ՏԱՆԿԸ, ՍՈՎՈՐԻՐ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆՑ ԼԵՏ ՊԻՏԻ ԳԲՐԾԵԼ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՍ ԿԵՑ
ԿԵԼ

ՅԵՂԻՐ ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍՏ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ ՏԱՆԿԻՆ:

ՄԱՐՏԻԿԻ ՀՈՒՇԱՏԵՐ ՏԱՆԿԵՐԻ ԴԵՍ ԿՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Յեթե քեզ հրամայված է գիտել տանկերի հայտնվելուն, յեղիւր աշաւուքն, ու-
շագիր և սրատես: Հիշիւր, վոր քո աշաւը յությունից և նախված, թե քո ընկերները
կարող են արդյոք պատրաստվել հանդիպելու տանկերին և միջոցների դիմելու նրանց
վոչնչացնելու համար:

2. Դիտիւր լավ ծածկված (բողբուջիված) տեղից: Դիտելիս հույսով ավելի դիւր աշա-
ւիւր, քան լսողությանդ վրա, վորովհետև հակառակորդը յերբմիջ դրոհի գնացող տան-
կերի աշխույժ գիտմամբ քողարկում և (խլացնում է) սովորականների աղմուկով կամ
հրետանային հրամադրյալն ուղղւոյնով:

3. Տանկերը կարող են շարժվել վոչ միայն ճանապարհներով, այլև խամ տեղով—
հիշիւր, վոր այնտեղից, վորտեղից առանց առանձին դժվարությունների կանցնի հե-
տեակը, անտեղից կանցնի նաև տանկերի մի ամբողջ խմբակ (խրուտ ճահիճ, մանր
անտու և այլն):

4. Յեթե տանկ տեսնես, խուճապի մի մատնիւր, մի վազիւր մի տեղից մյուսը, մի
շարժիւր տանկի յերկայույ տեղում, մի հուսահատիւր և մի մտածիւր, վոր տանկերը
սողում են անպաճախ քեզ վրա, ինչպեքեք թվում է, հեռից: Փախուստը կլինասի
և՛ քեզ և՛ նկերներէդ:

5. Տանկեր հայտնվելիս վոչմի գեպքում մի թողիւր պահապանեդ, նախ գննիւր,
վորաշիւր, թե ուր են ուղեւորվում նրանք, անմիջապես հաղորդիւր քո հրամաւարին և
սպասիւր նրա հրամանին, հրամանն ստանալով՝ կատարիւր այն արագ, ճիշտ և սառ-
նալ յուն. կերպով:

6. Յեթե հրամատարը չկա, դործիւր քո անձնական նախաձեռնությամբ և ամե-
նից ոռաջ ծածկույթի գտիւր ու թագնիւր նրա հետը, հիշիւր, վոր յեթե դու լավ ես
ծածկված ու քողարկված, սպա և տանկից մոտիկ կարիւր չես աննկատելի մնալ,—
այս կից վատ է յերեսւմ:

7. Նկատի ունցիւր, վոր խրուտ ճահիճը, խիտ կամ կոտորած և դեռևս չվատ
հատ կոճղերով անտուը, ձորերն ուղղաբղ ավերով ու հեղեղաաները, մինչև յերկու
մետր խորությամբ գետակները, տանկերին թույլ չեն տալ անցնելու, կես մետր հաս-
տ լթյուն ունեցող առանձին ծառերը նրան կտախեն դրանց լուրջն անցնել: Մանկույթի
կամ դիտակետ ընտրելիս, ոգտվիւր այդ խոչընդոտներով: Հետեւիւր վոչ միայն այլև
նրան, թե ինչ է շարժվում նրա հետևից: Յեթե տանկի հետևից շարժվում է հետե-
ւակը, ապա ամենալավ հրաձիգները և ձեռքի դնացրողները դրահաճ դժգոհներով
կխփեն տանկերին, իսկ մնացածը—հետեակին: Յեթե հետեակը յետ մղվի, հաղիվ թե
տանկերը հաջողություն ունենան—նրանք կամ դերի կընկնեն, կամ կվոչնչալին հրե-
տանու կողմից:

8. Յեթե հանդիպումը տանկի հետ անխուսափելի չէ, ապա խփիւր հրացաններով
դիտողական ճեղքերին կամ այն անցքերին, վորոնցից դուրս են ցցված թնդանոթներն
ու գնդացրերը:

10. Յեթե դու նոնակնիւր ունես, կապոցներով 5-7 հատ, նետիւր տանկի թրթուռներին
և վորե ասի—հատ-հատ նոնակներէդ տանկերի անխոցելի չեն:

11. Յեթե հանդիպես տանկին բնակելի վայրում, աշխատիւր շենքերի հետևից գնալ
նրան մոտիկ, մոտենալով նետիւր նրա տակ նոնակների կապոցը: Յեթե նոնակ չկա,

փակիր նրա ճանապարհը կամ գլուղի յեկը դերաներով կամ այլ առարկաներով, վորոնց տանկը չի կարող հաղթահարել: Յեթե տանկը կանգ առնի և խուժը դուրս դուրս խոչընդոտը վերացնելու, հարվածիք նրան հրացանով:

12. Յերթի ժամանակ անակնկալ կերպով տանկերի հանդիպելիս, աշխատիր ծածկվել հատերի, քարերի և թուժերի հետևը կամ թիուտներում և կրակիք նրանց հետևից: Աշխատիր խփել զխոռական ճեղքերին կամ նետեր տանկի թրթուռների տակ նռնակների կապոցը:

13. Յեթե տանկերը հառնեն քեզ խրամատում և դու ժամանակ չունենաս ծածկվելու, ապա հենց վոր տանկն սկսի անցնել խրամատը, նետիր նրա փորի տակ նռնակների կապոցը և կրակիք բոլոր ճեղքերի վրա, վոր դու տեսնում ես: Յեթե ձեռք չորսու կամ յերկաթի լինդ ընկնի, անցկացրու այն թրթուռների և ակի արանքը, թրթուռը կվնասվի և տանկը կանդ կառնի, զործիր համարձակ և հիշիր, վոր յեթե դռնվում ես տանկի կողքին, ապա նա քեզ միանգամից հարվածել չի կարող, դու մեռյալ տարածություն մեջ ես:

ՄԱՐՏԻԿԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ ՏԱՆԿԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՏԵՂ ԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՐՏԻԿԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ ՏԱՆԿԵՐԻ ԴԵՄ ԿՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տանկերի հետ հաջողությամբ զործելու համար, կարժիր բանակի ամեն մի ժարտիկ պետք է իմանա հետևյալ հիմնական կանոնները:

Յեթե պահանջվում է հարձակվելու տանկերի հետ միատեղ, մի աշխատիր շատ մոտենալ տանկին և նրա շարժման ժամանակ նրան կիսով մոտեցնել մի գնալ: Հիշիր, վոր տանկի վրա ուղղած կրակը կհարվածի և քեզ:

Յեթե տանկը քեզից մոտիկ խրվեց խրամատի, առվի, հորի կամ փոսի մեջ, նրան ողնաթիուն ցույց տուր, ինչով վոր կարող ես, հիշիր, վոր մարտում փոխադարձ ողնաթիունը և փրկանքը — մարտի հաջողության գրավախանն է:

Յեթե տանկն անցնի հակառակորդի զննացրի կամ թնդանոթի մոտով ու չնկատի նրանց, աշխատիր վռնչացնել դրանց քո միջոցներով: Հիշիր, վոր տանկերի առկայությունը քեզ չի ազատում հակառակորդի կրակային կետերի դեմ կռվելու պարտականություններից: Հատուկ ուշադրություն դարձրու թնդանոթները վռնչացման վրա: Թնդանոթը կարող է տանկին շարքից դուրս բերել, իսկ տանկը քո հավատարիմ ողնախանն է:

Հիշիր, վոր տանկի ամենավոխերիմ թնամին—դա հակառակորդի թնդանոթն է: Հենց վոր նրան հայտարերես, աշխատիր անհապաղ ցույց տալ նրան տանկերին ու քո հարևաններին և անմիջապես միջոցներ ձեռք առնել վռնչացնելու նրան և նրա սպասափորներին:

ԳՆՈՒՑՐԱՅԻՆ րենքը ն հակառակորդի թնդանոթները տանկերով դրոհելիս, աշխատիր կրակիք ամբողջ ուժն ուղղել տանկերին աջակցելու համար, կրակիք հակառակորդի հրանոթային և զննացրային սպասավորներին վրա:

ՏԱՆԿԵՐԻՆ կրակով աջակցելիս, կրակիք հակառակորդի վրա տանկերի արանքով և նրանց վրայով, մի վախիր թե քո կրակով կհարվածես նրանց: Երբեք կողմերից վստահելիորեն պաշտանված են հրացանային և զննացրային զննակներին և քո հրաձգությունը նրանց վնաս բերել չի կարող:

ՏԱՆԿԵՐԻՆ հետ միատեղ դրոհելիս, մի աշխատիր և շատ հետ մնալ նրանցից—200-300 մետրից վաչ հեռու, աշխատես տանկերի ձեռք բերած հաջողությունը ժամանակին չի ամրացվի և անողուս կկորչի: Հիշիր, վոր տանկերը հետևելով շարժմամբ կարող են գրավել հակառակորդի ամրությունները, բայց համարյա չեն կարող պահպանել գրավված իրենց ուժերով:

ՏԱՆԿԵՐԻՆ հետ միատեղ շարժվելիս, հիշիր ըողարիման մասին, ողնաթիւք ամեն մի փոսից, հողաթմբից, միջանտառից, առվից:

Յեթե մեր տանկը ներխուժեց խրամատի մեջ և չի կարողանում մաքրել այն հակառակորդից, ողնիր տանկին քո կրակով, սվինով կամ նռնակով:

Յեթե մարտում տանկից քեզ կխնդրեն ցույց տալ նշանատեղերը կամ հաղորդել քո ստորաբաժանումը (զորամասին) ինչերը, աշխատիր անհապաղ արագ և լրջորեն պատասխանել քեզ տրված հարցերին և ցույց տալ վայրում այն բոլոր նշանատեղերը, վորոնք դու տեսնել ես:

Յեթե տանկերը կանգնեցին և հետոն շարժվել չեն կարող, շարունակիր հարձակումը քո ստորաբաժանումների հետ միատեղ առանց տանկերի աջակցութան: Ամեն մի մարտիկ պետի իմանա, վոր տանկերը մարտում միայն ողնում են հետևակին և վաչ թե նրան փոխարինում:

Յեթե տանկը վնասվեց, վնասվեց (կարմիր դրոշակ պարզեց) աշխատիր, ինչ գնալ ել վոր Լճի, մոտենալ նրան և ողնաթիւք ցույց տալ:

Ս. Ամնոսով. — «Տանկերը մարտում»։ (Մեր յեզերի ինքուստրացման հաջողութիւնների հետ միասին աճում է և կարծիք բանակի տեխնիկական սպառազինութիւնը։ Վաղ միայն պետերի կազմը, այլև ամեն մի բանակային պիտի կարողանա ոգտվել տեխնիքական կովի հզոր միջոցներից, վարոնցով աստիճանարար հազեցվում է կարծիք բանակը։

Մեր թշնամիները մինչև ատամները գինվում են նոր տեխնիկայով, կտուցելով հազարավոր տանկեր, սավառակներ, տանկետկաներ, զրահամեքենաներ, ստեղծելով մոտորացված և մեքենայացված զորամասեր։ Պարզ է, վոր մարտավաշտերում, յերբ հարկ լինի կովել տեխնիկայի դեմ կամ զործել նրա հետ միասին—այլ պիտի անել հմտորեն։ Ընկ. Ամնոսովի զբբույր նկատի առնելով քիչ պատրաստականութիւն ունեցող ընթերցողին, վորոշ տեղեկութիւններ է տալիս տանկերի մարտական դործադրման հարցերի մասին։ Մարտական որինակների կենդանի բացատրութիւնը թույլ է տալիս հեշտութիւյամբ ըմբռնել զբքի լույսանդակութիւնը վաղ միայն դրազետ բանակայիններին, այլև յուրաքանչյուր մինչև իսկ սաղմական դործում քիչ պատրաստականութիւն ունեցող ընթերցողին։

Յ Ա Ն Կ

Ընդհանուր տեղեկութիւններ տանկերի գործադրութիւն մասին	
Տանկերի արկարները	
Տանկերի գործողութիւնների հիմունքները մարտում	138
Տանկերի գործողութիւնների հետեյակի հետ փոխադարձ սերտ համադրմանցութիւյամբ	14
Տանկերը պաշտպանութիւն մեջ և մարտից դուրս գալու ժամանակ	259
Տանկերի գործողութիւնները հետեյակից անջատ	32
Տանկերի գործողութիւնները հեծելազորի հետ միատեղ	38
Տանկերի գործողութիւնները մոտորացված և մոտամեքենայով զորամասերի կազմում	39

ՊԵՏԼՐՈՏԻ ՏՊԱՐԱՆ

Գում. 7504 (բ). Գառվեր 1740. Հրատարակ 2225. Տերած 5000.

Հանձնված է արտադրութիւն 17/V 1932 թ. Ս. Ֆ. Բ.
Ստորագրված է արտադրելու 21/VII 1932 թ.

293

ՀՀ Ազգային գրադարան



NL0227016

ԳԻՆԸ 45 ԿՈՊ. (3 ձ.)

41.537



Օ. АМОСОВ

ТАНКИ В БОЮ

Госиздат ССР Армени
Эривань-1932